

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՊՐԻԼ 2013



ԱՊՐԻԼԵԱՆ ՎԻՇՏ...

Libra-6

Productions Inc.

160 Waters Edge, Congers, NY 10920

ՎԿԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



Հրաւեր եղեռնի զոհերու եւ վերապրողներու ժառանգորդներուն

Նիւ Եորք, Մարտ 2013- Libra-6 Productions, Inc. կազմակերպութիւնը այսու կը յայտարարէ՝ ՎԿԱՅԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ծրագիրը, որը կը միտի ԱՆԳԼԵՐԵՆՈՎ հրատարակել եղեռնի զոհերու, եղեռնէն ազատուողներու եւ անոնց գերդաստաններուն պատումները, գրի առնուած զոհերու եւ վերապրողներու յաջորդ սերունդին կողմէ:

Libra-6 Productions, Inc. Նիւ Եորք նահանգի մէջ արձանագրուած, ոչ-շահաբեր կազմակերպութիւն է եւ համամարդկային խնդիրներ կը հետապնդէ՝ թատրոնի, արուեստի եւ մշակութային ձեռնարկներու միջոցաւ: Կազմակերպութեան նորընտիր նախագահը՝ Դոկտ. Հրանդ Մարգարեան ըսաւ. «Ամէն Հայ, Եղեռնի պատմութիւն մը ունի: Ամէն Հայ, նահատակ մ'ունի իր հոգւոյն մէջ: Այս ծրագիրը կը ձգտի՝ մեր նահատակներուն արդար դատը ներկայացնել համայն մարդկութեան: Ցարդ հրատարակուած յուշագրութիւններուն եւ բանաւոր ձայնագրութիւններուն կողքին, «Վկայագրութիւններ»ը յաւելեալ նոր, դեռ չգրուած եւ չարձագանգուած վաւերական պատումներ պիտի պարունակէ: Կարելի պիտի չլլայ Եղեռնի զոհերուն ամբողջական պատմութիւնները արձանագրել: Սակայն մեր պարտքն ու պարտականութիւնն է, կարելիութեան սահմաններուն մէջ, փրկել ինչ որ կարելի է եւ այդ ահաւոր դէպքերը կեանքի կոչել, որպէս փաստերու յաւելեալ շերտ մը Եղեռնի 100 ամեակի նախօրեակին, ուղղուած՝ անհատներու, պետական կառոյցներու եւ համաշխարհային մարմիններու:»

Խմբագրական կազմի արհեստավարժ անդամներն են՝ Այրիս Զեքէնեան, Այրիս Փափագեան, Րաֆֆի Սեթեան եւ Թամ Վարդապետեան, որոնք պիտի վերանային գրութիւնները հրատարակութեան պատրաստելու համար:

Այսօր քսանըմէկ երկիրներ, ԱՄՆի քառասուն նահանգներ եւ համաշխարհային ատենաներ պաշտօնապէս Եղեռնը ընդունած են որպէս Ցեղասպանութիւն: Սակայն երկիրներ կան, որոնք՝ «Թուրքիան չվրդովեցնելու» քաղաքականութիւն կը վարեն եւ կը խուսափին Ցեղասպանութիւն որակելու Եղեռնը: Թուրքիոյ պետութիւնը ամբողջովին կ'ուրանայ Եղեռնը: Այս ուրացման հակադիր շարժում մը սկսած է Թուրք մտաւորականներու կողմէ, որոնք կը հորդորեն իրենց կառավարութիւնը իրականութիւնը ընդունելու:

Կը սպասենք ձեր գրութիւններուն: Կը խնդրենք նկատի առնել հետեւեալ կէտերը-

- 1- Գրութիւնները պէտք է անձնական վաւերական պատումներ ըլլան:
- 2- Նշել զոհերու, վերապրողներու անունները, ծննդավայրերը, աքսորի ճանապարհը:
- 3- Գրութիւնները 1-15 էջ Անգլերէն կամ Հայերէն կրնան ըլլալ թարգմանութիւնը անվճար է:
- 4- Քաջալերելի է ընտանեկան կամ անհատական նկարներ, քարտէսներ դրկել:
- 5- Վաւերականութեան համար, գրողները պէտք է ներկայացնեն իրենց համառօտ կենսագրական կէտերը, անունն ու մականունը, հասցէն, հեռախօսի թիւը, Ե-նամակը:
- 6- Գրութիւն մը ընդունելու կամ մերժելու որոշումը, վերապահուած է Libra-6ին:
- 7- Նիւթական յատկացում պիտի չկատարուի ոեւէ գրողի:
- 8- Հրատարակութիւնը կ'արձանագրուի ԱՄՆի օրէնքներուն համաձայն:
- 9- Հրատարակուած գիրքէն օրինակ մը կը նուիրուի ամէն մէկ գրութեան հեղինակին:
- 10- Ա. հատորը -500 էջ- կը հրատարակուի ստացուած միւլթերու առաջնահերթ կարգով:
- 11- Գրութիւնները կարելի է յղել՝ e-mail: libra6productions@gmail.com



Խմբագիր՝
ԶԱԷՆ ԹՈՐԻԿԵԱՆ

Էջադրող-գրաշար՝
ՆՈՐԱ ՍՈՒՐԱՏԵԱՆ

Վարչական Պատասխանատու՝
ԱՐՄԵՆ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Սրբագրիչ՝
ԿԱՐՊԻՍ ԶԵՐՏԵԼԵԱՆ

Ծանուցումներ եւ Վաճառք՝
ՆԱՅԻՐԻ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Կայքէջ՝
ԱՐԱՄ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Նկարագրողում եւ էջադրող՝
ՎԱՆԻԿ ԹՈՐԻԿԵԱՆ
Torikian Design

HAIRENIK Weekly Հիմնում՝ 1899
80 Bigelow Ave., Watertown, MA 02472
Telephone: 617 926-3974
Fax: 617 926-1750
hairenikweekly@hairenik.com

Ծանուցումներու համար ads@hairenik.com
Գրախանութի հարցերով bookstore@hairenik.com

- 2 Խմբագրական
- 3 Ինքնութիւն՝ ...Յանուսի Հայեացքով
Թաթուլ Սոնենց-Փափազեան
- 6 Մտահոգութիւն (Մեծ Եղեռնի Հարիւրամեակի Ընդառաջ)
Պետրոս Քինյ. Շիթիլեան
- 8 Հայոց Ցեղասպանութեան...Արդարութեան Պահանջ
Տոքթ. Շահէ Ենիգոնջեան
- 11 Նամակներ Մեծ Եղեռնի Տարիներէն
Վարդան Մաթոսեան
- 16 Մայիս 28...Ա. Անկախութեան 95-ամեակին առթիւ.-
Հայաստանի Առաջին Հանրապետութեան Դեսպանը՝ Գերմանիոյ Մէջ
Համօ Պետրոսեան
- 21 Թրքական Ապատեղեկատուութիւն... Խեղաթիւրուած Ժապաւէններ
Աւօ Գաթրճեան
- 29 Հարցազրոյց՝ «Կօշիկներս Պոլիս Չգեցի» Ժապաւէնի բեմադրիչ
Նիկոլ Պէգճեանի հետ
- 32 Պոլսոյ Հայական Երաժշտական Աւանդոյթները Տիմիթրի Քանթեմիրի
«Գիրք Երաժշտութեան Մէջ»
- 34 Յակոբ Յակոբեանի Վրժինն ու Գրիչը
- 37 Հարցազրոյց՝ «Մենք կը հաւատանք որ Հայոց Ցեղասպանութիւնը
Համաշխարհային Նիւթ է», կը յայտնէ **Պարէտ Մարոնեան**
- 41 Վան Մարզը եւ Նահանգը... Նախքան Ցեղասպանութիւնը
Տոքթ. Դաւալեան
- 44 Իմ Լոյս Ապագան
Ալիկ Տերեմց

Յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք, հետեւեալ անձերուն եւ կազմակերպութիւններուն, որոնք իրենց լուծման տրամադրելով, օժանդակեցին լոյս ընծայելու այս բացառիկ թիւը.-

Մի Ոմն	\$ 5000	Հ.Յ.Դ. Փրովիտենսի «Քրիստափոր»	
Վարդգէս եւ Ալիս Անիւեան	\$ 500	Կոմիտէութիւն	\$ 250
Լուսին Գարճեան	\$ 500	Հ.Յ.Դ. Նիւ Եորքի «Ա. Գարօ» Կոմիտէութիւն	\$ 250
Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Նաօմի Թագեան	\$ 500	Հ.Յ.Դ. Ֆիլատելֆիոյ Կոմիտէութիւն	\$ 250
Անի Տէմիրճեան	\$ 500	Աշոտ Տոնիկեան	\$ 220
Տոքթ. Արա Զալեան	\$ 500	Նուարդ եւ Մարալ Ստեփանեան	\$ 200
Վարդանանց Ասպետներ	\$ 500	Սիւրբ եւ Մելիքէ Գարագաշեան	\$ 150
Տէր եւ Տիկ. Ճիմ եւ Նորա Գիզիրեան	\$ 250	Վարդգէս, Շաքէ եւ Նաթալի Վարդանեան	\$ 100
Տէր եւ Տիկ. Հայկ Սեդրակեան	\$ 250	(Նիւ Եորք)	
Նշան եւ Արաքսի Աբիկեան	\$ 250		
Բարսեղեան Հիմնարկ	\$ 250		
Հրայր եւ Արփի Արզումանեան	\$ 250		
Ստեփան Տէմիրճեան	\$ 250		
Նուրիան Պետիկեան	\$ 250		
Սարիատ Մելքոնեան	\$ 250		
Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Հուրի Պոյամեան	\$ 250		

Ծանօթ.- Այս տարուան «Հայրենիք»ի բացառիկին կողքը, փակցանկարչական (collage) գործ մը չէ, այլ վերջերս մահացած, հանրածանօթ գեղանկարիչ Յակոբ Յակոբեանի երկու գործերու ցուցադրութիւնը: Կիզակէտն է 1961-ին պատրաստուած «Վիշտ»ը Աթոռի վրայ մատած մարդ մը՝ գլուխն ի վար: Հայոց Ցեղասպանութիւնն է որ կը հիւծէ տաղանդաւոր արուեստագէտն ակնդիրը:

ՀՊԱՐԳԵԼՔԻ ՄԸ ՍԵՄԻՆ



Սովորութիւն՝ն թէ պարզ տրամաբանութիւն... Միշտ ալ երբ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման թուականը կը մօտենայ, կը սկսինք սրել մեր գրիչները եւ յաւելեալ ճիգով արտայայտուիլ պատահածի մը մասին, որուն հարիւրամեակի սեմին ենք:

Տրտունջք, Ցասուն, մեղամաղծութիւն: Նմանօրինակ պատկերներ շարունակ պիտի կրկնուին բեմահարթակներու վրայ, նաեւ մամլոյ ընդմէջէն: Շօշափելի յառաջդիմութիւն պիտի արձանագրենք, թէ կրկին պիտի հաւաքուինք լսելու համար նոյն երազային եւ զգացական լոգունքները:

Ակնթարթ մը հեռանալով այս զգացական բնաշխարհէն, վերադառնա՛նք իրաւապաշտ միջավայր: ...Եւ արդէն իսկ կը ստեղծուին հարցադրումները: Արտասուքող կամ յուզող, այս արցունքաբեր ճառերէն եւ կարգախօսներէն անդին, կը գիտակցի՞նք եւ կը մտածե՞նք թէ ինչ ըրինք անցեալ տարիներու ընթացքին եւ ինչ ալ պիտի կատարենք յառաջիկայ տարիներուն, եւ յատկապէս մինչեւ այդ օրը՝ Ապրիլ 24, 2015:

Ոմանք, եւ յատկապէս միջազգային քաղաքականութեան բնագաւառէն ներս, հանդուրժողականութեան դրօշակակիր թուրքիան եւ իր վարձկան պատմագէտները, կարծեցեալ իմաստութիւն եւ հասկացողութեան ոգի կը ցուցաբերեն, էական հարցը կը շրջանցեն, կ'ըսեն թէ պատմաբանները թող քննեն եւ եզրակացնեն, իրապարակելու համար հայկական Ցեղասպանութեան գոյութիւնը ու իսկութիւնը:

Ձարմանալի տրամաբանութիւն: Կարելի՞ է հարցադրումի տակ առնել ահաւոր անցեալ կատար-

եալ մը...կամ պարզունեկին կատարելապէս իրագործուած ահաւոր անցեալ մը, որ ցայսօր հպարդելքի՝ «թապու»ի վերածած է թէ՛ ցեղասպանմուողը եւ թէ՛ ցեղասպանողը:

Դեռ բոլորին միտքերուն մէջ վառ է Ցեղասպանութեան յիսնամեակը, որ անկիւնադարձ մը եղաւ: Արդարեւ, հակառակ, այդ օրերու խորհրդային վիթխարի կառոյցի գոյութեան, կարելի եղած էր երեւանի մէջ նշել այդ ՍՈՒԳը: Աւելին, 1965-ի այդ պատմական նշումէն ետք, յաջորդեց ազգային այն յատուկ աշխուժութիւնը, որ նկատելի եղաւ 1970-ական թուականներուն յատկապէս հայրենի մտաւորականութեան մօտ: Անոնք շարունակ կը նշէին ու մասնաւոր ուշադրութիւն կը դարձնէին Արեւմտահայաստանին եւ այդ ալ միշտ խորհրդային դաժան պայմաններուն մէջ:

Խորհրդային Հայաստանի պարագային ալ, այդ օրերուն խնդիր չկար Արեւմտահայաստանի պահանջատիրութեան իրապաշտութեան կամ անիրապաշտութեան:

Արեւմտահայաստանի պահանջատիրութիւնը, ուրեմն, համազգային մասշտապով հիմնականին մէջ կը բանաձեւուի ոչ թէ իբրեւ պարզ ներդրմութեան քանի մը նախադասութիւններու լեզուամարզանք, այլ որպէս արդարութեան հարց եւ ունի էապէս արդարահատոյցի իմաստ:

Այս մտորումներուն ընդմէջէն, տեղին է հարցադրել թէ երբ կ'ըսենք Ցեղասպանութիւն, ինչո՞ւ անոր անմիջականօրէն չենք միացներ, ընկերացներ ու կապեր հայրենահանման աղէտը, որուն հետեւանքով բազմահազար հայեր ապաստան գտան Կովկասի մէջ: Ի վերջոյ անոնց սերունդները հայրենահանուածներու յաջորդներն են, իսկ ինչ որ կը կոչենք Սփիւռք, հայրենահանուածներով կազմուած ընկերային երեւոյթ է:

Երկու տարի մնացած է այդ ամեակին...700 օրէն քիչ մը աւելի: Սակայն եկէ՛ք այդ ժամանակագրական երեւոյթն ու կառոյցը մէկդի դնենք, մանաւանդ երբ նկատի ունենանք, թէ քանի մը շաբաթէն՝ Մայիսեան անկախութեան ալ 95-ամեակն է: Հետեւաբար, պետական բարձր մակարդակի աշխատանք կայ կատարուելիք: Պէտք է որ խօսինք հայրենահանման մասին...Պէտք է որ արծարծենք բռնագրաւուած Հայաստանի ազատագրման ու հատուցման հարցերը:

Մնացեալը սրահներն ու դէմքեր յուզող եւ վրդովմունք յառաջացնող անցողական աղմուկ է:



ԻՆՔՆՈՒԹԻՒՆ՝... ՅԱՆՈՍԻ ՀԱՅԵԱՅՔՈՎ

Թաթուլ Սոնենց-Փափազեան

Պոսթըն, Մասաչուսեթս

Իր ծնունդէն աւելի քան երկու տասնամեակ անց, «Բարեւ» յեղափոխութեան շուար մթնոլորտին մէջ փրկութեան ճանապարհի որոնող մեր Երրորդ Հանրապետութեան բնակիչները կը կարծեն գտած ու ողջունած ըլլալ յուսատու ուղղութեան մը նշոյլները. ուղղութիւն մը՝ որ կրնայ գիրենք տանիլ դէպի իրենց կորուսեալ քաղաքացիութեան վերականգնումը... անորոշ ապագային: Երեւանի հրապարակներուն վրայ այսօր բարձրացող *ձայն բազմացն* շուրջ հինգամեակ մը առաջ, յետ տասնըհինգ տարիներու անմեկնելի ձգձգումներէ, Երրորդ Հանրապետութեան օրէնսդիր ժողովը կը վաւերացնէր սփիւռքահայոց երկքաղաքացիութեան իրաւասութիւնը՝ արձագանգ տալով հայոց ազգի ամբողջականութեան դարաւոր ընկալումին:

Ներկայ դարուս այս մոլորած երկրագունդին վրայ ցանուցիր շուրջ տասը միլիոն հայութեան մէկ քառորդը միայն այժմ կ'ապրի ու (մասամբ) կը գործէ հայրենի պետութեան սահմաններէն ներս: Մնացեալը, սփռուած երկու անջատ սփիւռքներու տարածքին — *ներքինը* (Սովետական Ռուսաստանի մականին տակ ձեւաւորուած տարածքներ), եւ, Ամերիկաներէն մինչեւ Աւստրալիա տարածուող՝ *արտաքինը* — առաջինը՝ Զարթօնքի տարիներու *Արեւելահայութեան* ժառանգորդ, րածքներ), եւ, Ամերիկաներէն մինչեւ Աւստրալիա

իսկ երկրորդը՝ ցեղասպանդէն յարեալ ու վերականգնեալ, ներկայ Թուրք իշխանութիւններու անդոհանքը հանդիսացող, *Արեւմտահայութեան*:

Ո՛չ որ այսօր կ'ուրանայ (ի բաց առեալ ութսուն տարիներու քեմալական ճշմարտամերժ դաստիարակութեան զոհ՝ երեւակայական ինքնութեան մը խաբկանքով ապրող թուրքերէ) Հայաստան կոչւած երկրի մը եւ իր իւրայատուկ ինքնութեան երկու տարբերակներով ճանջցուած ժողովուրդի մը պատմական, անցեալ ու ներկայ գոյութիւնը՝ խարսխուած հարուստ մշակոյթի մը խորունկ, այժմ երկփեղկուած, արեւելեան ու արեւմտեան արմատներուն: Այսօր հոգեպէս խարսխուած, սակայն ֆիզիքապէս, հրով ու սրով, կամայ թէ ակամայ պոկուած ու հեռացած այդ արմատներէն, աւելի քան եօթը միլիոն հայեր կը ձգտին պահել իրենց հազարամեակներ կտրած ինքնութիւնը՝ աչքերնին յարած դէպի արեւելք կամ արեւմուտք -- կախեալ իրենց աշխարհագրականօրէն տարանջատ իրավիճակէն:

Կարելի չէ ուրանալ այն իրողութիւնը, թէ, անջատ այդ արմատներէն, գաղութային առօրեային մէջ յարանուանութեան վերածուած ժողովուրդը, հետզհետէ հեռանալով ինքնուրոյն ազգութեան մը ինքնագիտակցութենէն՝ զոհ կրնայ դառնալ

Ճերմակ ջարդին: Այսուհանդերձ, մեկդի դնելով բացարձակապաշտ նոյնամանութեան մը մտացածին յղացումները, անուրանալի իրողութիւն կը մնայ զանազանութեան բարենպաստ ազդեցութիւնը՝ ամբողջ խարսխուած ազգային ինքնութեան տէր ազգերու կեանքէն ներս: Կասկած չկայ, որ հայ ժողովուրդը, իր երկու տարանջատ թելերով հանդերձ, այդ ազգերէն մէկը կը մնայ այժմ, Զոռմի կայսերական պանթոնի բազմապիսի աստուածներէն -- իր երկու հակադրեալ երեսներով ծանօթ -- Յանուսին (Janus) նման, մէկ դէմքով աչքերը յառած դէպի Արեւելք, իսկ միւսով՝ դէպի Արեւմուտք...

Այսպէս, արեւմտահայ Սփիւռքի գաղութներու մեծամասնութիւնը, իր ներկայ աշխարհագրական դիրքերէն իր հայեացքը ուղղած դէպի արեւելքի հայաբնակ թէ հայաթափ ոստանները, իսկ հայրենաբնակ ու ներքին Սփիւռքի մեր գաղթաշխարհը՝ միտքն ու ուշը սեւեռած դէպի արեւմուտք, դէպի դասական «Երկիր»՝ որպէս նոյն ազգի երկու թելերը, այսօր կը ներկայանան մեզի իրենց ներքին բազմապիսի այլազանութիւններով -- պարզունակ ընդհանրացումներու տանող անշահ մտային մարզանք մը պիտի ըլլար Խօսիլ «տիպար» սփիւռքահայու կամ հայաստանցիի մասին, ի տես այն լեզուական, մշակութային ու կենցաղային հիմնական թէ մակերեսային տարբերութիւններուն՝ զորս անկարելի է անտեսել: Այսուհանդերձ, անկախ այդ տարբերութիւններէն, իրականութիւնը այն է, թէ այդ երկու հոգեպէս անքակտելի երկու թելերուն հակադրեալ հայեացքները աշխարհագրականօրէն կը միանան Վասպուրականի մէջ, Արարատի երկգլխանի շուրջին տակ:

Արդարեւ, նոյն իսկ մեր հայրենի հողի վրայ ապրող, հայաստանցի, արցախցի թէ ջաւախքցի ժողովուրդը (ինչպէս մեր հազարաւոր քրտախօս ու թրքախօս, Թուրքիոյ սահմաններուն մէջ իրենց հայրենի՝ հողերուն վրայ իսկ իրենց Մայրենի՝ կորսնցուցած հայրենակիցները) կը ցուցաբերեն կենցաղային ու մշակութային ակներել տարբերութիւններ -- թերեւս ո՛չ այն չափով նկատելի ինչպիսին են պարսկահայու, լիբանահայու, ֆրանսահայու կամ ամերիկահայու միջեւ գոյութիւն ունեցող մշակութային ու կենցաղային խրամատները, այսուամենայնիւ նոյնքան անուրանալի: Ազգ մըն ենք, որ հազարամեակներու ընթացքին իւրացուցեր է անհամար մշակոյթներու խորքն ու ձեւը. Աշխարհի գրեթէ բոլոր մշակոյթները թողեր

են իրենց դրօշմը հայու մտքին ու հոգիին վրայ, ձեւաւորելով անոր լեզուն ու կենցաղը հայ իրականութեան անհանգիստ ու յարափոփոխ տարածքին: Այս իրականութեան լոյսին տակ, մեր առջեւ դրուած խնդիրը, Զայրենիքի ու Սփիւռքի -- ֆիզիքականը կանխող -- մտային ու հոգեկան միատեղումն է՝ համազգային ինքնագիտակցութեան մը սահմաններուն մէջ, ուր կարելիութիւնը ստեղծուի օտար քաղաքական ազդեցութիւններու դէմ ազդեցիկ դիմադրութեան ատակ ազգային ճակատի մը՝ որ յստակօրէն կարենայ ձեւակերպել մեր համազգային պայքարի ռազմավարական դիմագիծը եւ ուղեգիծը: .

Ի տես մեր ազգի աշխարհացրիւ իրականութեան, համահայկական ղեկավարութեան մը սկզբունքային անհրաժեշտութիւնը կարելի չէ՝ խնդրոյ առարկայ դարձնել: Լաւագոյն պարագային, այդ ղեկավարութիւնը պէտք է գար Զայրենիքէն, հիմնուած հայրենի թէ տարասփիւռ մեր ժողովուրդի օրինական ու բարոյական համագործակցութեան վրայ: Դժբախտաբար, ներկայ քաղաքական ու ընկերային խախտու պայմաններու լոյսին տակ, այսօր, Եղեռնի Զարիւրամեակի վաղորդայնին իսկ, դժուար թէ կարելի ըլլայ իրականացնել այդ:

Զարկ չկայ ըսելու, թէ այդ իրականացումը կրնայ տեղի ունենալ միայն երբ, առաջին հերթին, իրականութիւն կը դառնայ հայրենիքին ու ազգին ծառայելու, կամաւոր նուիրումի պատրաստականութիւնը Զայաստանի եւ Սփիւռքի երիտասարդ սերունդին մէջ՝ երբ անոնք համոզուին, թէ իրենք կրնան ըլլալ տէրը իրենց հայրենիքին՝ որպէս ազա՛տ եւ իրաւասու՛ քաղաքացիներ, եւ ո՛չ թէ իրաւագուրկ եւ կամազուրկ հպատակներ՝ ապօրինի միջոցներով իշխանութեան աթոռները գրաւած անորակ անհատներու անյազ քմայքներուն: Նուազ քան քառորդ դարու կեանք մը բոլորած Մեր Երրորդ Զանրապետութիւնը, իր անկախացման օրէն ասդին, կորսնցուց իր բնակչութեան առ նուազն մէկ երրորդը: Շշմեցուցիչ այս երեւոյթին պատճառները կը շարունակեն իրենց գոյութիւնը այսօր եւս, հարցականի տակ դնելով մեր պետականութեան ապագան:

Վերջ պէտք է տալ ճակատագրապաշտ ու ողբերգակ տրամադրութիւններու: Զամաշխարհային իրականութեան մէջ միակ մենք չենք որ կանք որպէս բռնութեան տակ աշխարհացրիւ դարձած ժողովուրդ: Մեծ են այն ազգերը որոնք գիտեն

պարտութիւններու բեկորներէն յաղթանակներ կերտել: Ի մտի ունենանք այն իրողութիւնը, թէ անկախ հայրենիքի մը առընթեր՝ մեր ընդհանրապէս բարեկեցիկ ու կրթեալ գաղութներով, համաշխարհային ներկայութիւն ենք այսօր, եւ որպէս ա՛յդ, կարող ենք մեր ծայրը լսելի դարձնել երկրագունդի չորս ծագերուն ի խնդիր մեր արդար Դատի բարենպաստ լուծման ու մեր պետականութեան դիւանագիտական թէ տնտեսական կարիքներու լաւագոյնս մատակարարման:

Գաղտնիք մը չէ՝ ներկայիս մինչեւ ատամները գերզինուած, Հայաստանը «Արեւմտեան Ատրպէյճան» յայտարարող մեր նաֆտով հարբած հարեւանին յետին նպատակը՝ որ շարունակութիւնն է 1915-ի թուրք իթքիհատականներու ցեղասպան վոհմակին գազանային ծրագիրներուն: Այս արիւնախառն քարիւղով օծուած ձեռնոցը այսօր նետուած է ընդհանրական հայութեան երեսին: Մեր նորագոյն պատմութեան ճակատագրական այս օրերուն, միացեալ տեսլականէ զուրկ Հայրենիք եւ Սփիւռք կրնան դա՛ռն կորուստներու ենթարկուիլ առանց այն միացեալ կամքին որ ցոյց տուին անոնք համայն աշխարհին՝ Եղեռնի

Յիսնամեակին, Վաթսունամեակին եւ արցախեան պատմական գուպարին ամբողջ ընթացքին:

Իրականութիւնը ա՛յն է, թէ Առաջին Աշխարհամարտէն ի վեր, հայութիւնը մտած է մահու-կենաց պայքարի մը մէջ. պայքար՝ հզօ՛ր ուժերու դէմ ի խնդիր ազգային դատի մը, որ իր համահայկական էութեամբ, կը մերժէ ամէ՛ն երկփեղկում՝ իր քաղաքական, դիւանագիտական ու ռազմական նկրտումներուն ընթացքին. ամէ՛ն ընկրկում իր նոր պետականութեան քաղաքացիներէն, ու երկքաղաքացիութեամբ կամ ոչ, հայրենիքի հետ կապ պահող սփիւռքահայէն...

Ժամանա՛կն է, որ աշխարհատարած հայութեան երկու թեւերը միականօրէն ընդգրկեն մեր արդար Դատը, Յանոսի նման, իրենց հայեացքն ու ընթացքը անշեղ ուղղելով մին՝ դէպի Արեւելք, միւսը՝ դէպի Արեւմուտք, վերջնականօրէն մերուելու համար Արարատի փէշերուն սփռուած իրենց պատմական Հայրենիքի ու Հայկազեան տոհմի ծննդավայր՝ Վասպուրականի հարազատ երկնքին տակ, ազատ անկախ ու յաւե՛տ միացեալ:



Armenian Middle Eastern Gourmet Cuisine

Eastern Lamejun Bakers
QUALITY FOODS

145 BELMONT ST. BELMONT, MA 02178

PHONE: 617-484-5239
FAX: 617-484-3643

WWW.EASTERNLAMEJUN.COM

ՄՏԱՅՈԳՈՒԹԻՒՆ

(ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻՆ ԸՆԴՈՒՄ)

Պետրոս Բեկյ. Շիրիլեան
Սփրինկֆիլտ, Մասաչուսեթս

Մեծ Եղեռնի հարիւրամեակը ինչ ձեւերով կատարելու հարցը արդէն սկսած է շօշափուիլ հանրային կարծիքին կողմէն: Բացի Հայաստանի մէջ կազմաւորուած կեդրոնական յանձնախումբէն, տարբեր գաղութներու մէջ մարմիններ կը կազմուին: Միւս կողմէն ոմանք յոյս ունին, որ 2015-ին կարելոր իրադարձութիւններ տեղի պիտի ունենան Հայ Դատին պահանջատիրութեան կապակցութեամբ: Նման կարծիքները իրենց տեղը ունին, չնայած այն բանին որ իմ կարծիքով 2015-ին, օրինակ՝ Ամերիկան դեռ պատրաստ պիտի չըլլայ պաշտօնապէս ընդունելու Մեծ Եղեռնը, նկատի ունենալով ճիւղփոխիք իրավիճակը աշխարհի ու մանաւանդ Միջին Արեւելքի մէջ: Յուսամ, որ անակնկալներ ըլլան, բայց այսօրուայ դրութեամբ հարցը այդպէս կ'երեւի:

Զնայած այս բոլորին, ոմանք արդէն գործի անցած են: Այսպէս. ներկայիս մեր ամենամեծ յօրինող Տիգրան Մանսուրեանը Մեծ Եղեռնին նուիրուած ``Ռեքուիեմ``-ը յօրինած է, օգտագործելով համաշխարհային դասական երաժշտութեան կողմէն օգտագործուող Կաթողիկէ Եկեղեցւոյ ծեսին յայտնի լատիներէն թեքստը, բան մը որ աւելի դիւրընկալի կը դարձնէ զայն օտարներուն կողմէն: Ասոր վրան պէտք է աւելցնել, որ երաժշտական մասնագիտականօրէն դիտուած ան արժեքաւոր եւ գեղեցիկ ստեղծագործութիւն մըն է ու իր հնչողութեամբ հայկական: Ան արդէն կատարուած է Գերմանիոյ մէջ: Արդեօ՞ք պիտի հասկնանք նման ստեղծագործութեան մը կարելորութիւնը եւ արդեօ՞ք զայն պիտի ներկայացնենք ուր եւ ինչպէս որ պէտք է:

Տարակուսական այս ձեւով կը դնեն հարցը,



որովհետեւ չնայած այն բանին որ շատ կը խօսինք, դեռ լայնօրէն դիտած եւ որպէս ազգային ծրագիր հասկացողութիւն, մեր տեսադաշտը, կամքը, իրագործելու ճիգը սահմանափակ են: Արուեստի եւ մշակոյթի միջազգային մակարդակի մեր իրագործումները աւելի անհատական իրագործումներ են, քան ազգային ծրագրի մը ծնունդը: Զնայած այն բանին որ հայկական ստեղծագործ հանճարէն ու մշակոյթէն կու գան միջազգային մակարդակի մեր մեծերը, օրինակ՝ Ուիլիըմ Սարոյեանը, Արամ Խաչատուրեանը, Շարլ Ազնաւուրը եւ ուրիշներ, անոնք սակայն իրենց անհատական ճիգին եւ օտար մշակոյթներու ընձեռնաց հնարաւորութիւններուն արդիւնքն են: Մենք դեռ չենք հասունցած այն մակարդակին, որպէսզի մեր մէջ գտնուող կարողութիւններուն համար պարարտ հող ստեղծենք զարգանալու եւ իրենք զիրենք իրագործուելու: Ասոր պատճառը մէկ կողմէն նեղ մտածողութիւնն է, իսկ միւս կողմէն ալ նախանձը: Դժբախտաբար օրինակները քիչ չեն: Օրինակ. իր ղեկավարութեամբ հայ հանդիսացող եւ հայկական քաղաքականութիւն վարող Ռուսաստանի ``Սթ. Փետրոսպոլիկ Պալատներ`` յայտնի երաժշտական միջազգային փառատօնի հովանաւորողներուն մէջ մէկ հատ հայ չկայ, չնայած այդ ուղղութեամբ եղած փորձերուն: Ուրիշ օրինակ մը. ասկէ քանի մը տարիներ առաջ, երբ բոլորիս յայտնի ``Beast on the Moon`` թատերգութեան համար հանգանակութեան մասին երեւելի մէկու մը կարծիքը հարցուցի, պատասխանը եղաւ. ``Դրամ կը մուրան``...

Վերջին տարիներուն այս ցաւալի իրականութենէն բացառութիւն կը հանդիսանայ հայկական ճատրակին արձանագրած վերելքը, որ կը

բացատրուի ներկայիս Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին ճատրակին հանդէպ ունեցած սիրով ու հետաքրքրութեամբ: Պարոն Սարգիսեանը ինքը կը հանդիսանայ Հայաստանի ճատրակի ընկերութեան նախագահը: Ահա ցայտուն օրինակ մը: Բնագաւառ մը, որ պետութեան ու հանրութեան կողմէն պէտք եղած աջակցութեան արժանացած է, սկսած է միջազգային մակարդակի վրայ արդիւնքներ տալ: Իսկ մեր ազգը տաղանդաւոր է ուրիշ շատ բնագաւառներու մէջ, ու եթէ անհրաժեշտ պայմանները ստեղծուին, նման յաջողութիւններ կրնան տեղի ունենալ տարբեր բնագաւառներու մէջ:

Վերադառնալով Մեծ Եղեռնի հարիւրամեակի նշման եւ ձեռքի տակ ունենալով հասանելի տեղեկութիւնները, այն մտահոգութիւնը ունիմ որ կարելոր այս ամեակը կրնայ վերջանալ միայն այն բանով, որ փոխանակ մէկ օր, քանի մը օրերու ընթացքին խօսուի այդ մասին եւ քանի մը ոչ մեծ պետութիւններ կամ հոս ու հոն նահանգներ ընդունին Մեծ Եղեռնը: Հարիւրամեակին մնացած է ընդամենը երկու տարի եւ առ այժմ թռիչք ունեցող ու աշխարհը ցնցող ծրագիր մը չի նկատուիր: Առ այժմ, ժողովրդական արտայայտութեամբ՝ ``մենք մեր իւղով տապկուելու`` հոտը կու գայ այս ամենէն: Մտահոգուելու պատճառ ունիմ, որովհետեւ յաճախ կորսնցուցած ենք նման առիթներ մեր նեղմտութեան եւ ներքին վէճերու պատճառով:

Եթէ կ'ուզենք Մեծ Եղեռնը պէտք եղած ձեւով նշել, պէտք է ցնցենք աշխարհը: Քաղաքականօրէն դժուար թէ այդ մէկը ի վիճակի ըլլանք ընելու: Բայց ուրիշ ասպարէզ մը կայ ուր կարելի է նման բան մը իրագործել: Այդ մէկը արուեստն է, աւելի ճիշդ ըլլալու համար այսօր արուեստի ամենատարածուած ու ազդող տեսակը՝ շարժապատկերը, Մեծ Եղեռնի մասին շարժապատկերի մը ստեղծումը, շարժապատկեր մը՝ որ նախընտրելի է իրագործուի ոչ թէ հայերու կողմէ, շարժապատկեր մը որուն մէջ ընդգրկուին Հոլիվուտի մեծ անուններ, հայկական ``Շինուերի Ցանկ`` մը: Ահա եթէ յաջողիք նման բան մը իրագործել, այդ ատեն աշխարհը ցնցած կ'ըլլանք, այդ ատեն է որ Մեծ Եղեռնը կը դառնայ ոչ թէ միայն մասնագէտներու ու որոշ զանգուածներու կողմէն ճանչցուած իրականութիւն, այլ լայնօրէն ընդունուած եղելութիւն:

Մեծ Եղեռնի մասին նախապէս իրագործուած

շարժապատկերները, որոնք հիմնականօրէն եղած են հայերու կողմէ, ինչ-ինչ պատճառներով պէտք եղած արդիւնքը չեն տուած: Վերջին տարիներուն պարբերաբար կը լսենք, որ Հոլիվուտի այս կամ այն աստղը համաձայնած է Մեծ Եղեռնի մասին շարժապատկերի մը մէջ դեր առնելու: Ետքը կը հերքուին նման լուրերը: Յստակ է, որ պատերազմ մը տեղի կ'ունենայ, որպէսզի յանկարծ նման ծրագիր մը չիրականանայ: Արդէն շրջան մըն է, որ կը խօսուի ``The Genex`` շարժապատկերի ծրագրի մասին: Ինչքան հասկնալի է, այս մէկը դարձեալ հայկական մտաշղացում մըն է: Վերջերս համացանցին մէջ տեղեկութիւն կար, թէ Նաթալիա Փորթմանը համաձայնած է դեր առնել այդ շարժապատկերին մէջ: Յուսամ ուրիշ մեծ անուններ ալ պիտի աւելնան:

Մարտահրաւերը այս է. Մեծ Եղեռնի հարիւրամեակին պէտք է հայկական ``Շինուերի Ցանկ`` մը ստեղծել: Նման ծրագրի մը իրագործման համար, այսօր պէտք եղած նիւթական աղբիւրները կան մեր ազգին մէջ: Կը մնայ կամք, միտք, եռանդ, կազմակերպչական տաղանդ ու նման ծրագրի մը կարելորութեան հաւատացող մարդիկ, որպէսզի այդ մէկը իրականանայ: Ահա այս իրագործելով է, որ 2015-ին կրնանք ցնցած ըլլալ աշխարհը:





ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅԱՆՁ

Տոքթ. Շահե Ենիգոմյեան

Սան Ֆրանսիսքո, Գալիֆորնիա

Այս յօդուածը մաս մըն է «Աւելի Գործնական ճամբու Քարտէս մը՝ Հայոց Ցեղասպանութեան Հանդէպ Արդարութեան Ի Խնդիր» ուսումնասիրութիւնէն: Այս մասը, յատկացուած է Հայոց Ցեղասպանութեան եւ հարիւրամեակի սեմին միտքերու եւ մօտեցումներու համադրում մըն է:

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նախորդող երեք տարիները պիտի ըլլան այն հանգրուանը, երբ հայ ազգը պէտք է կրկնապատկէ իր ճիգերը Հայոց Ցեղասպանութեան առնչութեամբ արդարութեան հետապնդման իմաստով: Մինչեւ վերջերս Հայոց Ցեղասպանութեան առնչուող մեր բոլոր ջանքերը ունեցած են հոգեբանական հիմք՝ զգացական եւ ենթակայական կիզակէտ դիտուած: Կազմակերպած ենք յիշատակի ձեռնարկներ, հոգեհանգիստներ, աշխարհով մէկ խօսքեր արտասանած ենք իւրաքանչիւր Ապրիլ 24-ի: Կազմակերպած ենք ցոյցեր, պետական մարմիններէ լսած ենք Հայոց Ցեղասպանութեան ճանաչման մասին կրկնուող յայտարարութիւններ եւ այս բոլորը մեզ գոհունակութիւն պատճառած են: Վերջին տասնամեակին աւելի կուռ քայլեր առնուած են ճանաչում ապահովելու իմաստով:

Վերջերս հռետորականութեամբ եւ քննարկումներու ճամբով խօսուած է փոխհատուցման մասին՝ առանց շատ պարզաբանումներ տալու այս առնչութեամբ տարուող ու տարուելիք գործունէութեան ու ծրագիրներուն մասին: Ցաւ ի սիրտ, Անատոլիոյ եւ Մերձաւոր Արեւելքի աշխարհաքաղաքականութիւնը հայկական կողմին դիմաց խոչընդոտ կանգնեցուցած է՝ գերտէրութեան կարիքներուն եւ հայութեան արդարութեան իրաւունքին միջեւ հասարակած շահերու հետաքրքրութիւններ ստեղծելու առնչութեամբ:

Աւելի ճշգրիտ, կարելի է ըսել, որ մինչեւ 2010 թուական իր յանցագործութիւնը ընդունելու նպատակով Թուրքիոյ վրայ մեր բանեցուցած ճնշումը ընթացած է նեղ ռազմավարութեամբ: Առաջին հերթին լուսարձակի տակ առնուած էր ճանաչման



առնչութեամբ եղած անարդարութիւնը, երկրորդ՝ թուրքիոյ վրայ ճնշում բանեցնելու ճիգերը եղած են անուղղակի, այսինքն՝ ստեղծել միջազգային իրազեկութիւն՝ գործադրուած անարդարութեան նկատմամբ, այն յոյսով, որ աշխարհին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը անխուսափելիօրէն պիտի առաջնորդէ թուրքիոյ կողմէ անոր ընդունման:

Իրականութեան մէջ Հայոց Ցեղասպանութեան իրաւունքը եւ անարդարութեան հարցը բարդ գործընթաց մըն է. անոր բաղադրիչները կարելի է ամփոփել հետեւեալ կերպով:

1. Պայքարիլ թուրքիոյ ուրացման եւ արդարութեան տնօրինման խոչընդոտման դէմ:
2. Ճանաչում. պաշտօնական ներման հայցումի հասնելու համար:
3. Հատուցում. ինչքերու վերականգնում եւ միւթական հատուցում:
4. Հողային հարցեր. սահմաններու ճշդում-ուրուագծում:
5. Պապենական հողերուն վերադառնալու իրաւունք:

Պէտք է ընդգծել, որ սովորաբար կատարուող «յաջորդականութեամբ» յատկանշուող մօտեցումը՝ ճանաչում, ապա հատուցում, ապա վերականգնում, հէքիաթային մօտեցում է: Ասիկա յարմար չէ այսօրուան քաղաքականութեան: Վեր-

յիշեալ տարանջատումը պարզապէս կը ծառայէ բացատրելու մեր դատին բարդութիւնը: Անարդարութեան լուծում գտնելը կարելի է նուաճել բոլոր մակարդակներու վրայ աշխոյժ յարծակումով, անհրաժեշտութեան պարագային՝ միաժամանակ:

Մատնանշելի է, որ ճանաչումը այլեւս չի դիտուիր իբրեւ վերջնական նպատակ: Գոյութիւն ունին ռազմավարական ծրագրաւում, ընդ որում՝ հատուցման ձեռքբերման աշխատանքներ, որոնք աւելի արմատական երեւելով, կրնան իրականութեան մէջ հզօրացնել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուժգնութիւնը: Այս հարցը՝ իբրեւ կարողականութիւն ունեցող կռուան, կրնայ դառնալ դիւանագիտական ճշմարիտ արգելք թուրքիոյ համար: Նաեւ պէտք է վեր առնենք եւ շեշտը դնենք այն երեւոյթին վրայ, որ բռնագրաւեալ տարածքներու ու տունդարձի իրաւունքի գործընթացները աւելի բարդ են, քան ճանաչումն ու հատուցումը: Ի սկզբանէ ցեղասպանութեան արարքին եղած առնչումը իրաւական իմաստով այսօր աւելի կը դժուարացնէ տարածքային խընդիրներուն լուծում գտնելը: Ասիկա պայմանաւորած է անով, որ միջազգային օրինականութիւններ ստեղծուած են Կարսի պայմանագիրով. արդարեւ, թուրքիոյ տրուած է հողատարածք մը, որուն մէջ ներառուած են հնագոյն Անի քաղաքն ու Արարատ լեռը. նաեւ պայմանաւորուած է Հայաստանի Հանրապետութեան ներկայ իրականութեամբ՝ իբրեւ ինքնիշխան պետութիւն: Այս հողային տարածքները, որոնք անարդարութեան բաղադրիչ մասը կը կազմեն, հաւանաբար կարիք ունին իրաւական տարբեր ռազմավարութեան, թէւ լրացուցիչ են Հայոց Ցեղասպանութեան ճանաչման-հատուցման:

Հատուցման հետապնդումը կամ «ճամբորդութիւնը»՝ մեր նպատակներու ուղղութեամբ, ինքնին



բազմակողմանի է:

-Սեփականութեան վերականգնում՝ ազգային ու անձնական. նկատի ունենալով տեղահանութեան եւ լուծարքի օրէնսդրութիւնը՝ թրքական կառավարութեան կողմէ ընդունուած (տես ստորեւ), հայերուն ինչքերը յափշտակուած են իրենցմէ:

- Յափշտակուած ինչքերուն մէջ կան եկեղեցիներ, ազգային կալուածներ եւ անձնական սեփականութիւններ:

- Նիւթական կամ դրամական փոխհատուցում, որ ցարդ հարկ եղած ատակութեամբ չէ գնահատուած:

- Ցեղասպանութեան հետեւանքը մեր մշակութային ժառանգութեան վրայ եւ իբրեւ ազգ մեր կենսունակութեան սպառնացող մնայուն վտանգը. նկատի ունենալով մեր սփռուածութիւնը արեւմտեան երկիրներու մէջ, ուր մնայուն կերպով սպառնալիք կայ մեր լեզուին, մշակոյթին եւ ինքնութեան: Այս մէկը կը կոչուի «Սպիտակ ցեղասպանութիւն»:

Թուրքիոյ մէջ հայութեան ունեցուածքին օրինական կարգավիճակ տալով՝ հայերը պիտի

անդրադառնան, որ հատուցման հարցը բաւական երկար ժամանակի կարօտող խնդիր է:

1929-ին օրէնսդրութիւնը իրաւունք տուած է 1914 թուականէն սկսեալ 15 տարի տուեալ դատարկ հողը, դաշտը, մրգաստանը, ագարակը գրաւած անձներուն դառնալու որպէս այդ ինչքերուն թուրք նոր սեփականատէրերը, նաեւ՝ 1919 թուականէն սկսեալ, 10 տարիէ ի վեր գրաւուած շէնքերը կամ այլ անշարժ գոյքեր օրէնքով ինքնաբերաբար կը թրքացուին. այսպիսով հայերուն բոլոր գոյքերն ու սեփականութիւնները, որոնք առնչուած են Ցեղասպանութեան, կ'իրացուին: Բայց ճիշդ հոս է մեր իրաւական պայքարին կիզակետը:

Հայկական կողմը եւս լաւապէս կը հասկնայ հայութեան ինչքերուն վերաբերող օրինական տարբերութիւնը՝ 1937-էն ետք եւ Հայոց Ցեղասպանութեան առնչուող, որովհետեւ հայկական ունեցուածքներ, որոնցմէ շատերը կը պատկանին հայկական բարեսիրական հիմնադրամներու, նաեւ պատրիարքութեան, վերջին տարիներուն թրքական կառավարութեան կողմէ «ազգայնացուեցան»: Հետեւաբար, վերջիններուն իրաւական կարգավիճակը տարբեր է:



HMI is the one-stop-shop for your entryway needs, whether it's our Entry Doors; Aluminum Storm Doors; or Security Storm Doors.

To become an HMI Dealer contact Joan Snyder at 800.343.2610

VISIT US AT: WWW.HMIDOORS.COM/ARMENIANWEEKLY



ALUMINUM STORM



FIBERGLASS ENTRY
SMOOTH & TEXTURED STEEL ENTRY




SECURITY STORM



Proudly made in the U.S.A.

• Entry, Aluminum Storm and Security Storm Doors available in 5 arch top styles





ՆԱՄԱԿՆԵՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Նիւ Ըըրզի

Մեծ Եղեռնի տարիներուն, Հայ Եկեղեցին ամէն-
ուրեք փորձած է իր կարելիութեան սահմաններուն
մէջ հասնիլ գաղթական, որբացած ու մահուան
սպառնալիքին տակ գտնուող ժողովուրդի ծով
կարիքներուն: Հրատարակութեան յանձնող հետեւե-
լալ նամակներուն մէջ, այդ մտահոգութիւնը կը
նկատուի ամենատարբեր ձեւերով: Այսպէս, առաջին
նամակը կ'անդրադառնայ Ամերիկայի մէջ «տաճ-
կահայոց տառապանքը ներկայացնող» լուսանկար-
ներու ցուցադրութեան: Երկրորդ նամակը ուղեկ-
ցած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ի
հայրապետական կոնդակին՝ առ ԱՄՆ նախագահ
Վուորտ Ուիլսոնին, «իւր այն մեծ քրիստոնէական եւ
մարդասիրական զգացումների համար»: Երրորդ
նամակը կը հաղորդէ Նիւ Ըըրզիէն դեղորայքի առա-



քումը Կովկաս: Վերջին երկու նամակները կ'անդրա-
դառնան Կարինի մէջ «Եղբայրական Օգնութեան»
յանձնաժողովի կազմութեան եւ Երեւանի մէջ, արդէն
անկախութեան շրջանին, որբերու կրօնական դաս-
տիարակութեան տէր կանգնելու մտահոգութեան:
Այս նամակներուն բնագիրները պահուած են Ամերի-
կայի Արեւելեան թեմին կից «Գրիգոր եւ Գլարա
Զօհրապ» Կեդրոնի արխիւին մէջ: Բոլոր նամակ-
ները ձեռագիր են եւ լոյս կը տեսնեն նոյնութեամբ,
անհրաժեշտ լրացումներով եւ ծանօթագրութիւն-
ներով՝ մեր կարելիութեան սահմաններուն մէջ:

Ա.¹

Նորին Ա. Օծուբիւն
Տ. Տ. Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց³
Ա. Էջմիածին

Նիւ Եորք, Մայիս 12, 1916²

Աստուածաբեալ Հայրապետ,
Այսօր առանձին ծրարով Ձեր Վեհափառութեան հասցէին կը ղրկեն երեք օրինակ անգլիերէն տեւո-
րակներ⁴, որոնք կը պարունակեն այն պատկերները, զոր Հայրապետական դիւանէն ստացած էինք
ասկէ առաջ: Նոյն պատկերները ապակիի վրայ առնուած են մոզական լապտերով ցուցադրուելու
համար, եւ մեծ տպաւորութիւն կը գործեն Ամերիկայի հասարակութեան վրայ: Այս անգլիերէն տեւո-
րակները հազարաւոր օրինակներով կը տարածուին միթինգներու մէջ, որոնց գլխաւոր ատենախօսն է
հիմա պարոն Մորկընթո⁵, Ամերիկեան դեսպան Թուրքիոյ⁶: Տարակոյս չկայ թէ մեծ արդիւնք պիտի
բերեն յօգուտ մեր կարօտեալ եղբարց եւ քերց:

¹Նամակը գրուած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ամերիկայի Շրջանակային ժողովի նամակաթուղթի
վրայ:

²Նամակին վրայ գրուած է 1916 – VI/4, որ ամենայն հաւանականութեամբ ստացման թուականն է:

³Գէորգ Ե. Սուրենեան (1847-1930) Ամենայն Հայոց Կաթողիկոս եղած է 1911-1930ին:

⁴Այս գրքոյկներուն իմէջ ըլլալը կարելի չէ եղած ստուգել:

⁵Հենրի Մորկընթո (Henry Morgenthau, 1856-1946)՝ ամերիկացի փաստաբան, ԱՄՆի Թուրքիոյ դեսպան 1913-1916ին:

⁶Մորկընթո Թուրքիայէն մեկնած է Փետրուար 1, 1916ին:

Խոնարհաբար կը խնդրեմ որ եթէ կան ուրիշ պատկերներ, տաճկահայոց տառապանքը ներկայացնող, Ձերդ Վեհափառութիւնը թող բարեհաճի հրամայելու որ ղրկուին նորէն, յաջորդ հրատարակութիւններու մէջ գործածուելու համար:

Մնամ ի համբոյր ս. աջոյ
Աստուածարեալ Հայրապետին
ՎԱՀԱՆ Մ. ՔԻՒՐՔԵՏԱՆ⁷

Բ.

23/V/ 1916 թ.
թ. 1103

Ամերիկայի Առաջնորդ
Գեր. Տ. Արսէն Ծ. վրդ. Վեհունուն⁸



Ն. Ս. Օծութեան պատուէրով Կաթողիկոսական Դիւանը ուղարկում է սորա հետ յանուն Գերապատուութեան այն շնորհակալութեան եւ օրհնութեան շնորհագիր սրբատառ Կոնդակը որ Ազգիս Վեհափառ Հայրապետը շնորհել է Միացեալ Նահանգների նախագահ Վուտրօ Վիլսոնին⁹, իւր այն մեծ քրիստոնէական եւ մարդասիրական զգացումների համար, որ ցոյց տուեց թէ ինքը եւ թէ իւր կառավարութիւնը ապաբաղդ տաճկահայ ժողովրդի մնացորդներին:

Նորին Սրբութիւնը պատուիրեց յայտնել, որ Կոնդակը ըստ պատշաճի վայելչութեամբ եւ հանդիսաւորութեամբ ներկայացնէք տիար նախագահին, որի եղանակը թողնուի է Գերաշնորհութեանդ խոհական հաստատութեան եւ տեղւոյդ ականաւոր հոգեւորական եւ աշխարհիկ անձերի խորհրդակցական վճռին: Ցանկալի է, որ մատուցումը լինի յատուկ պատգամաւորութեան ձեռքով, եթէ պարագաներն այս կը ներեն¹⁰:

Ինչ վերաբերում է Ս. Կոնդակի ինչի մէջ ներկայացնելուն, այն եւս թողնուի է նոյն այդ խորհրդի որոշման, յուսալով, որ ըստ ամենայնի յարմարագոյն եղանակը կը գտնուի:

Ինչ եղանակով, ում հետ եւ ինչպէս մատուցանելու մասին ժամանակին փոյթ կունենաք զեկուցանել Ն. Ս. Օծութեան:
[Ստորագրութիւն]

Գ.¹¹

West Hoboken,

4 Դեկտ. 1916

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե.րդ Սրբազնագոյն
Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Վեհափառ Տէր,
Վեպ Յօպօքընի Հայ Ազգային Կարմիր Խաչի Ընկերութիւնս, հայրենիքի մեր դժբաղդ ու անկարգադրական եղբայրներուն եւ քոյրերուն ցաւերովը մտահոգուած՝ եւ ամենամուփրական ու սրբազան

⁷Վահան Քիւրքեան (1863-1961), ամերիկահայ հանրային գործիչ, հրապարակագիր եւ պատմաբան:

⁸Արսէն Ծ. վրդ. Վեհունի Ամերիկայի Առաջնորդ եղած է 1913-1917ին:

⁹Վուտրօ Ուիլսոն (Woodrow Wilson, 1856-1924)՝ ամերիկացի քաղաքական գործիչ, Միացեալ Նահանգներու նախագահ 1912-1920ին:

¹⁰Կոնդակը ԱՄՆ նախագահին յանձնուած է Դեկտեմբեր 14, 1916ին՝ Վեհունիի գլխաւորած պատուիրակութեան մը կողմէ, որուն մաս կը կազմէին գաղութի ներկայացուցիչներ եւ ամերիկացի քաղաքագետներ (տե՛ս V. R., "Armenia Thanks America," The New Armenia, January 1917, p. 13):

¹¹Նամակը գրուած է Հայ Ազգային Կարմիր Խաչի Ընկերութիւն Նիւ Ճըրզիի նամակաթուղթի վրայ:

պարտականութենէ մղուած ու մեր փոթորկող սիրտերն ու խղճերը հանդարտեցնելու համար, ընկերութիւնս ըստ իւր առաքելութեան Նիւ Եօքքի Զայուհեաց Կարմիր Խաչին հետ համագործակցաբար, յարգելի բժիշկ Մ. Յովսէփեանի¹² անուան կը դրկէ 500 տոլար արժողութեամբ դեղօրայք, որուն 200 տոլարը մեր ընկերութիւնը, իսկ 300ը՝ Նիւ Եօքքի Զայուհեաց Կարմիր Խաչը տրամադրած է գործածուելու համար մեր հիւանդ եղբայրներու եւ քոյրերու դարմանումին:

Եթէ պատահի որ դեղօրայքը Ձեզ հասնելէ առաջ յարգելի բժիշկ Մ. Յովսէփեան մեկնած ըլլայ Ամերիկա, այդ պարագային կը խնդրենք Ձերոյ Վեհափառութենէն որ բարեհաճէիք այդ դեղօրայքը ըստ Ձեր կամաց յատկացնել բոլոր այն գաղթականական հիւանդանոցներուն, ուր անմիջական կարիք կայ:

Խոնարհաբար համբուրելով
Ձերոյ Վեհափառութեան Ա. Աջը

Վէսթ Զօպօքընի Ազգ. Կարմիր Խաչի կողմէ
Ատենադպրուհի Ատենապետուհի
Օր. Վիքթորիա Մուրաջանեան
Տիկ. Թագուհի Սարգիսեան
Գանձապահուհի
Տիկ. Նուարդ Զազալեան



Դ.¹³
Նորին Սուրբ Օծութեան
Ծայրագոյն Պատրիարքի – Վեհափառ Զայրապետի
եւ Սրբազնագոյն Զայրապետի
Ամենայն Զայոց Տ.Տ. Գեորգայ Ե.րդի

Ամենախոնարհ յայտարարութիւն

Ձերոյ Սուրբ Օծութեան բարձր հրամանի համաձայն ժամանելով Կարին եւ մանրամասն ծանօթանալով ու տեսնելով գաղթականների վիճակը ու նոցա օգնութեան հասնելու կարիքի չափը, նախապատրաստական ժողովներ ունեցայ տեղս գտնուած հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ – խորհրդակցելու հացից, շորից եւ այլ իրերից զրկուած գաղթականների կարիքները թեթեւացնելու շուրջը: Ինչպէս ես - այնպէս եւ ժողովրդի ներկայացուցիչներն ՚ի նկատի ունենալով – որ տեղական գործող մարմինների՝ ինչպէս Քաղաքների Միութիւնը¹⁴, Մոսկուայի Զայոց Կոմիտէն¹⁵ եւ այլն զրկուած են հնարաւորութիւնից լրացնելու եւ թեթեւացնելու գաղթականների ցաւն ու դառն կացութիւնը, անհրաժեշտութիւն նկատեցինք անպայման ունենալ Ձերոյ Վեհափառութեան բարձր հովանու ներքոյ «Եղբայրական Օգնութեան» յանձնաժողով¹⁶, հնարաւորութեան սահմաններում ազատելու մերկ գաղթականներին ձմրան ցուրտ ու բութից, քաղցած ու մերկ փողոցներ թափառելուց, հաց, շոր, տուն, շաքար մատակարարելուց, տեղաւորելու նոցա շրջակայ անմարդաբնակ հայկական գիւղերում, հայթաթելու նոցա համար սերմացու, եգ, գութան, ապագայում նրան սպառնացող սովի ճանկերից փրկելու համար. անտէր ու անխնամ մնացած երեխաներին որբանոցներում տեղաւորելու, հնարա-

¹²Մովսէս Յովսէփեան (1876-1952), ամերիկահայ բժիշկ եւ հանրային գործիչ, որ այդ ժամանակ Կովկաս ճամբորդած էր՝ իր մասնագիտական ծառայութիւնը բերելու գաղթականներու օժանդակութեան գործին:

¹³Նամակին վերեւ նշուած է ստացման թուականը՝ 1916/XII/19

¹⁴Զամառուսական Քաղաքների Միութիւնը հիմնուած էր Օգոստոս 1914ին Մոսկուայի մէջ՝ քաղաքապետներու համաժողովի մը ընթացին: 1914ին Քաղաքների Միութեան կովկասեան յանձնաժողովի նախագահը Ալեքսանդր Խատիսեանն էր:

¹⁵Մոսկուայի հայկական կոմիտէն կազմակերպուած է քաղաքի հայ համայնքին կողմէ՝ հայ զինուորներու, վիրաւորներու եւ գաղթականներու օժանդակելու համար:

¹⁶Դեկտեմբեր 28, 1914ին, Գեորգ Ե. Կաթողիկոսի կոնդակով եւ նախագահութեամբ ստեղծուած էր Եղբայրական Օգնութեան յանձնաժողովը, որ զբաղւած է վիրաւոր կամաւորներուն եւ գաղթականներուն օժանդակութեան խնդիրներով: Յանձնաժողովը բաժանումներ ունեցած է Երեւանի, Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի եւ այլ քաղաքներու մէջ:

Լորութեան սահմաններում դպրոցներ բանալու փողոցներից ազատելով նրանց - եւ այս դժբախտ ժողովրդի այլ եւ այլ անհրաժեշտ ու անյետաձգելի կենսական կարիքները լրացնելու համար: Ուստի եւ սոյն նպատակով գումարուած նոյեմբերի 29-ի ծխական ընդհանուր ժողովը ընտրեց Ձերդ Վեհափառութեան բարձր հովանու ներքոյ «Եղբայրական Օգնութեան» յանձնաժողով, բաղկացած հետեւեալ անձերից: [sic] Տ. Տաճատ քահանայ, Տ. Արսէն քահանայ, պ.պ. բժիշկ Մարգարեան (Քաղաքների Միութեան ընդհանուր լիազօր), Սմբատ Տէր Յակոբեան (Բարեգործական Ընկ. եւ Կենտ. Կոմիտէի ներկայացուցիչ), բժիշկ Զաւրիել¹⁷, Ռոստոմ Զօրեան¹⁸, Գ. Թերզեան, Լ. Մոկիվանեան (իրաւաբան), Մալխասեան (իրաւաբան), բժիշկ Ա. Մելքոնեան, Լիւլէճեան (ուսուցչապետ)¹⁹, Ռ. Տէր Ղեւոնդեան, Մ. Ղուկեան եւ Արմենակ Միրոյեան. իսկ անձնափոխանորդներ՝ պ.պ. Դարեան, բժիշկ Խաչիկեան, բժշկուհի օր. Սարուխանեան²⁰ եւ Վահան Շամինեան:

Ամենախոնարհաբար զեկուցանելով վերոյիշեալների մասին Ձերդ Վեհափառութեան, խնդրում եմ բարեհաճել հաստատել եւ օրհնել Ձերդ Սուրբ Օծութեան խոնարհ ծառայ որդիներին: Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ ծառայ եւ որդի՝ ԶԱԲԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ²¹

թ. 417
յ8 դեկտեմբերի 1916 ամի
Կարին

Ե.
Նորին Սրբազնութեան
Հայրապետական Թեմի փոխ-թեմակալ Գերապատիւ
Տ. Խորէն Եպիսկոպոսին²²



Յակոբ աւագ քահանայ Խաչվանքեանից²³

Յայտարարութիւն

Անցեալ 1917 թ. աշնան միսոր Եարոյի²⁴ միջոցաւ ծանօթացայ Ամերիկեան որբանոցների տնօրէն դոկտ. Րէյդնոլսի [sic]²⁵ հետ. որբուկների կրօնա-բարոյական դաստիարակութեան մասին մտքերի փոխանակութիւն ունեցանք: Ճշմարտութիւնը խոստովանած՝ այս ծանրակշիռ խնդիրը ամերիկեան ընկերութեան, որոշ դրդապատճառներով, աւելի էր զբաղեցնում, քան մեզ. երկար դատելուց յետոյ մենք յանգանք հետեւեալին.- ընկերութեան պաշտօնեաները ամենայն Կիւրակի առաւօտեան ժամերգութեան կամ պատարագին որբերին բերելու էին եկեղեցի եւ ես նրանց հասակին ու հասկացողութեան մատչելի ձեւով ու լեզւով խօսելու էի օրւայ աւետարանի իմաստի համեմատ:

Սեպտեմբեր ամսից սկսեց այդ պարապմունքը. որբերը կանոնաւոր յաճախում էին եկեղեցի եւ ես կարողութեանս չափ աշխատում էի զարթեցնել նրանց մէջ աւետարանի ոգու համապատասխան մարդկային բարոյական պարտականութեանց ճանաչողութիւն, սէր դէպ իրանց տանջւած ու խոշտանգւած ազգն ու եկեղեցին, որ մինչ ցարդ հոգեպէս ու բարոյապէս խնամել է իր զաւակներին որպէս հարազատ մայր:

¹⁷ Յակոբ Զաւրիել (1866-1920), յեղափոխական գործիչ, Դ. Յ. Դաշնակցութեան անդամ:

¹⁸ Ստեփան Զօրեան (Ռոստոմ, 1866-1919)՝ յեղափոխական գործիչ, Դ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն մէկը:

¹⁹ Տօնապետ Լիւլէճեան (1865-1917), կրթական գործիչ:

²⁰ Հերսելիա Սարուխանեան՝ բժշկուհի, դաշնակցական գործիչ Վահան Նաւասարդեանի ապագայ կինը (տես Սոնա Զէյթեան, Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճելէս, 1992, էջ 168-172):

²¹ Զաւէն Եպս. Բաբայեան (1876-1925)՝ եկեղեցական գործիչ, հետագային՝ Արցախի առաջնորդ:

²² Խորէն Եպս. Մուրադբեկեան (1873-1938)՝ ապագայ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորէն Ա. (1932-1938):

²³ Նամակի հեղինակին մասին տուեալներ չենք կրցած գտնել, բացի անկէ, որ եղած է նկարիչ Տաճատ Խաչվանքեանի (1896-1940) հայրը:

²⁴ Էռնեստ Ա. Եարօ՝ ամերիկացի միսիոնար:

²⁵ Էռնեստ Ա. Եարօն (E. A. Yarrow, 1876-1939) եւ բժ. ճորճ Ա. Ռէյնոլտսը (George C. Reynolds) ամերիկացի միսիոնարներ էին, որոնք գործած են Վանի մէջ մինչեւ քաղաքին վերջնական պարպումը 1915ի ինքնապաշտպանութենէն ետք:

Մանուկները սովորեցին եկեղեցական երգեր – օր. Փառք ի՛ բարձունս, Նորաստեղծեալ եւ այլն, երգում էին մեզ՝ քահանաներիս հետ կանոնաւոր, կապւում եկեղեցու հետ եւ նրա անբաժան անդամը դասւում: Պէտք էր տեսնել թէ ի՞նչպէս նրանք ուրախութեամբ ու սիրով մասնակցում էին ժամերգութեան եւ աշխատում օր առաջ սովորել ամէն ինչ եւ ոչ մի բանում յետ չմնալ:

Եկեղեցի յաճախում էր նաեւ դոկ. Ռէյնոլդսը եւ շատ անգամ յայտնում էր իր գոհունակութիւնն ու փափաքը, որ բաղդից հալածւած այդ անմեղ արարածները ջերմ սիրով կապւեն իրանց հնադարեան, անաղարտ մնացած առաքելական եկեղեցու հետ:

Փոքր ընդհատումով այս գործը շարունակւեց մինչեւ սոյն 1918 թ. մեծի պահոց շաբաթները. այնուհետեւ կեանքի յեղեղով ու ալեծովի վիճակը ամէն ինչ մոռացութեան մատնեց. դոկ. Ռէյնոլդսը միստր Եարոյի հետ մեկնեցին Ամերիկա²⁶, եւ չկարողացայ այլեւս յաճախել եկեղեցի մանուկների սրտի հետ խօսելու. այդպէս այդ գեղեցիկ ձեռնարկը մնաց իր կէս ճամբին: Դրանից յետոյ մանուկ որբերը թէեւ յաճախում են եկեղեցի, բայց ոչ այնպիսի կանոնաւորութեամբ, ինչպէս առաջ եւ ոչ ոք, կարծեմ, առիթ չէ ունեցել խօսելու եկեղեցում:

Ապա ուրեմն ինձ ըստւած տեղեկանքը ստոյգ է, որ կրօնական ըմբռնողութեան եւ կրթութեան պակաս է:


Սրբազնութեան բանաւոր յայտարարութեան համաձայն, այցի գնացի ամերիկեան ընկերութեան ներկայացուցիչներին եւ այդ առթիւ խօսեցի նրանց հետ – որոնք յայտնեցին, որ իրանց որբանոցներում դասաւանդութեան հետ սկսւել է եւ կրօնի ուսուցումը, որի համար ունեն յատուկ ուսուցիչ, ցանկալի է իմանալ ո՞վ է այդ ուսուցիչը. այդ չի գոհացնում. նրանք փափագում են ունենալ եկեղեցական երգեցողութեան հմուտ մի անձն, որ մանուկներին սովորեցնի եկեղեցական երգեր – շարականներ, որ որբերը անցեալի նման կանոնաւոր յաճախեն եկեղեցի եւ մասնակցութիւն ունենան ժամերգութեան եւ լսեն քարոզներ: Քարոզիչը եկեղեցականաց պարտքն է, որ թերացել են: Որոշեցին շաբաթւայ մէջ մի օր էլ, առաւօտուն սկսելուց առաջ, մի ժամ նւիրել բարոյական դաստիարակութեան խնդրին եւ ուսուցանողի պարտականութիւնը ինչպէս քարոզելու եկեղեցում խնդրեցին վերցնեն ինքս, որի համար տւել են իմ հաճութիւնն ու համաձայնութիւնը:

Երեւանում կենտրոնացած են բազմաթիւ որբեր թէ ամերիկեան եւ թէ Եղբայրական Օգնութեան ներքոյ. նրանց բարոյական դաստիարակութիւնը թէեւ բարձի թողի արած չէ, համեստ կարծիքովս կարելոր է, որ յիշած ձեւի զրուցատրութիւնը ու մեկնութիւնը կանոնաւոր շարունակւել եկեղեցիներում Արժանի է մեծ ուշադրութեան եւ անյապաղ կատարման, քանի որ այստեղ ամենայն ինչ խորհրդաւոր է ու վսեմ, մանաւանդ երբ խօսողի զգացմունքներն ու մտքերը կը լինեն անկեղծ ու պարզ ու մայրենի եկեղեցու շահերին նւիրած:

ՅԱԿՈԲ ԱԲԱԳ ՔԱՂ. ԽԱՉՎԱՆՔԵԱՆ

28 Հոկտեմբերի (մ.տ.) 1918
Երեւան

²⁶ Ռէյնոլդս Կովկասէն մեկնած է Յունիս 1918ին (տե՛ս “Dr. George Reynolds Returning from Turkey,” Janesville Daily Gazette, June 29, 1918):



ՄԱՅԻՍ 28...

Ա. ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Հ.Հ. ԴԵՍՊԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ
ԴՈԿՏ. ՃԵՅՄՍ ԿՐԻՆՖԻԼՏ
ԾՆՆԴԵԱՆ 140-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ
(1873-1939)


Համո Պետրոսեան

Պերլին - Գերմանիա

Գերմանիոյ մէջ Հայաստանի Առաջին Հանրապետութեան դեսպան Դոկտ. Ճեյմս Կրինֆիլտը 74 տարի առաջ մահացած է եւ հողին յանձնուած Իրանի Տուլապի շրջանի Բուրաստան հայկական գերեզմանատան (հին հողամաս) 37-րդ շարքի թիւ 1729 գերեզմանին մէջ:

Հայ ժողովուրդին պատմական ճակատագիրը շատ դառն ու ծանր եղած է, բայց այն, ինչ որ տեղի ունեցաւ 19րդ դարու վերջին եւ 20րդ դարու առաջին տասնամեակներուն, վեր է ամեն տեսակի երեւակայութենէ: Մարդասպան կարմիր Սուլթան Ապտիլ Համիտը որոշած էր բնաջնջել Արեւմտեան Հայաստանը եւ այդ կատարեց անլուր բռնութեամբ, “քաղաքակիրթ” անաստուած քրիստոնեայ աշխարհի կառավարութիւններու աչքին առջեւ:

Գերմանիոյ մէջ թրքաւեր Վիլհելմ կայսեր ձեռք առած միջոցներուն պատճառով մինչեւ իսկ արգելքներ դրուեցան ի նպաստ Հայերու հաւաքոյթներ կատարելու եւ զոհերու համար հանգանակութիւններ կատարելու:



Հովանաւոր՝ Սարգիս եւ Մարի Յովհաննէսեան

1918 թուականի Մայիս 28-ին երբ հռչակուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը, այդ փոքրիկ Հայաստանը ներքին ճակատի վրայ աղքատ եւ ուժասպառ էր, ծանրաբեռնուած՝ բազմահազար գաղթականներով ու որբերով, անհաց, անդեղ եւ անօգնական: Իսկ արտաքին ճակատի վրայ մէկ կողմէ կար դրացի երկիրներու աննպաստ դիրքորոշումը եւ միւս կողմէ՝ պաշարուած էր թշնամիներով:

Այսպիսի պայմաններու մէջ գործի լծուեցաւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը: Կազմակերպուեցաւ դեսպանական պաշտօնութիւնը եւ նշանակուեցան (1918-1920) աւելի քան 29 դիւանագիտական ներկայացուցիչներ՝ օտար պետութիւններու մօտ:

1920 Յունուար 19-ին Հայաստանի Հանրապետութիւնը ճանչցած էին Մեծն Բրիտանիան, Ֆրանսան, Իտալիան եւ նոյն տարուայ Ապրիլ 23ին՝ Միացեալ Նահանգները:

1920 Յունուար 19-ին, Հայաստան իրողական (տը ֆաքթօ) ճանաչում կը ստանայ հաշտութեան խորհրդաժողովէն, ան կը պարտադրուի ունենալ դիւանագիտական գործունէութիւն:

Հայաստանի Հանրապետութիւնը եղած էր պա-

կումը անցեալ դարավերջին սկսած հայոց ազատագրական շարժումին եւ, հետեւաբար, յեղափոխական կռուի ընթացքին օտարներու հետ շփման մէջ մտնելու փորձառութիւնը ձեռք ձգած մեր գործիչները միայն կրնային դառնալ անկախ Հայաստանի արժանաւոր դեսպանները:

Այսուհանդերձ՝ պատմութիւնը պիտի չկարենայ մոռնալ անունները յեղափոխական այս հայորդիներուն, որոնք մահուան եւ ազատութեան ճանապարհներէն անցնելէ ետք, հայ ժողովուրդի մեծ յարութեան վկաները դարձան աշխարհին դիմաց:

Եւրոպայի մէջ յարգուած մտաւորական եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարախօս Միքայէլ Վարանդեան, եւրոպական կուսակցութեանց հետ իր տարիներու շփումներով եւ ծանօթութեամբ՝ ներկայացուց Հայաստանը Հռոմի (Իտալիա) մէջ: Օսմանեան դրամատան խիզախ գրաւումին անզուգական հերոս եւ քաղաքական գործիչ Արմէն Գարօն՝ ներկայացուց մեր խիզախ ժողովուրդը Ուաշինկթընի մէջ: Իրանահայ գրող եւ հրապարակախօս տիկին Տիանա (Անահիտ) Յովհաննէսի Աբգարեանը վարեց Հայաստանի Հանրապետութեան գործերը՝ ճափոնի մէջ: Բովանդակ աշխարհի պետութեանց քաղաքական ներկայացուցիչներու մէջ, ան առաջին կիներ եղած է: Խանասորի արշաւանքի Իշխան Յովսէփ Ար-



Գերմանիոյ մօտ Հ.Յ. դեսպան ճէյմս Կրինֆիլտ (աջին), կողակիցը՝ Կատարինա Սիմոն Թումանեան եւ Վահան Զաքարեանը

ղութեանը, ժողովրդային ղեկավարի իր անվիճելի հեղինակութեամբ՝ Իրանի մէջ վարեց Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչութիւնը: Պերլինի (Գերմանիա) մէջ, Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ նշանակուեցաւ իրանահայ իրաւաբան, գիտնական եւ ազգային գործիչ ճէյմս Կրինֆիլտը: Շարքը երկար է.- Ս. Ղազարեան՝ Փարիզ (Ֆրանսա), Միրզայեան՝ (Մարսէյ Ֆրանսա), Արսէն Կիտուր՝ Պաղտատ (Իրաք), Գալուստ Ասլանեան՝ Սելանիկ (Յունաստան), Խոսրով Զօհրապ՝ Գահիրէ (Եգիպտոս), Կարպիս Տիլսիզեան՝ Միլանօ (Իտալիա), Տիգրան Չամքերթեան՝ Անվեր (Պելճիքա), Սահակ Գեորգեան, Պելկրատ (Եուկոսլաւիա), Տիգրան Բէկզարեան՝ Թիֆլիս (Վրաստան), Աշոտ Թօմեան՝ Տօն եւ Կուպան (Ռուսաստան), Գամպերեան՝ Մանչեսթըր (Անգլիա):

Հետաքրքրական է ճէյմս Կրինֆիլտի ծագումին մասին անդրադառնալը: Իր հայրը՝ Սահակ անունով վաճառական մըն է, որ ծնած է Գերմանիա: Ապա Անգլիա ապրած, Անգլիայէն ժամանելով Իրան կը հաստատուի Թաւրիզ եւ կը զբաղուի առեւտուրով: Այդտեղ, ան կը ծանօթանայ Բժշկեան ընտանիքին եւ ընտանիք կը կազմէ Հռիփսիմէ Բժշկեանի հետ. ունենում է երեք զաւակներ՝ ճէյմս, ճորճ եւ Ալպերթ:

Իրաւաբան ճէյմս Կրինֆիլտը ծնած է Թաւրիզ, Մարտ 17, 1873-ին եւ մկրտուած է Հայ Առաքելական եկեղեցւոյ մէջ: Եօթ տարեկան հասակին, հայրը իրեն կը դրկէ Գերմանիա, Կիւթըրսլոհ քաղաքի մէկ քրիստոնէական երկրորդական վարժարանի մէջ, գերմանական դաստիարակութիւն ստանալու համար:

Բարձրագոյն ուսում ստանալու համար, Կրինֆիլտ կը ճամբորդէ Լայփցիկ եւ կ'արձանագրուի տեղւոյն Լայփցիկի համալսարանի մէջ: Կրինֆիլտ, 1892 թուականին, 19 տարեկան հասակին, գերմանացի վերապատուելի Վիլհէլմ Ֆապրի հետ իբրեւ թարգմանիչ՝ չորս ամսուայ համար կը ճամբորդէ Իրան, այնտեղ մօտէն կը ծանօթանայ քիւրտերուն, իրենց պատմութեան եւ լեզուին: Տարի մը ետք, Գերմանիոյ մէջ Կրինֆիլտ, կը զբաղուի թարգմանելով քիւրտերու համար իրենց լեզուով Նոր Կտակարանը: Այսպէս, բացի գերմաներէն եւ հայերէն լեզուներէն, Կրինֆիլտ կը խօսէր քիւրտերէն, թրքերէն եւ պարսկերէն:

Աւետարանի թարգմանութիւնէն անկախ, Կրին-



ֆիլտը մտադրած էր անպայման պատրաստել “Քրտական բառարան” եւ “Քրտական լեզուի գրականութիւն” գիրքերը: Արդեօք այս գիրքերը հրատարակուեցա՞ն թէ ոչ, յստակ չէ:

1894-ի Սասունի ջարդը եւ 1895 եւ 1896-ի հայութեան կոտորածները ամբողջ Թուրքիոյ տարածքին, չարագուշակ լուրերը օրէ օր կը տարածուէին ամբողջ Եւրոպայի մէջ:

Վերապատուելի Եոհաննէս Լեփսիուսը, Գերմանիայի Ֆրիդտորֆի շուրջ գտնուող եօթ պատուելիներուն հետ միասին կը կազմակերպէ Սեպտեմբեր 29-ի, 1895-ի Գերման Արեւելեան Առաքելութիւնը (Deutsch Orient Mission):

Ճիշտ մէկ օր վերջ, Սեպտեմբեր 30-ին, երբ Պոլսոյ մէջ առաջին հայկական ջարդը սկսած էր եւ լուրը կը հասնէր Գերմանիա, վերապատուելի Եոհաննէս Լեփսիուսը նոյն օրը նոյն առաքելութիւնը կը վերածէ հայկական առաքելութեան:

Երբ անգլիական եւ ֆրանսական թերթերը Թուրքիոյ մէջ պատահած ջարդերու մասին մանրամասնօրէն գրեցին, գերմանական մամուլը գրեց թէ՛ բոլորն ալ անգլիական զրպարտութիւններ եւ անգլիական սուտեր են: Գերմանական թրքասէր մամուլը քօղարկեց այս վայրագ եղելութիւնները:

Լուրերու իրողութիւնը ստուգելու համար վերապատուելի դոկտ. Եոհաննէս Լեփսիուս եւ ուսանող ճէյմս Կրինֆիլտ 1896 թուականին միասնաբար ճամբայ ելան դէպի Թուրքիա: Լեփսիուս իր հետ ուներ ինը հազար զուիցերիական ֆրանք, որ հաւաքած էր Գերմանիոյ Աւետարանական համայնքներէն:

Երեք ամիս Թուրքիա շրջել է ետք Լեփսիուսը եւ Կրինֆիլտ կը վերադառնան Գերմանիա: Լեփսիուս շուտով Պերլինի մէջ կը հրատարակէ “Հայաստան եւ Եւրոպա” 245 էջերէ բաղկացած գիրքը, որ յետագային երեք անգամ հրատարակուեցաւ:

Կարճ ժամանակաշրջանի մը համար Կրինֆիլտ կը վերադառնայ Իրան, բնակութիւն կը հաստատէ Թաւրիզի մէջ, եւ յետագային իր անձնական աշխատանքի բերումով բնակութիւն կը հաստատէ Կովկասի մէջ:

Կրինֆիլտը 1899 թուականին, Պաքուի մէջ կ'անունանայ մեծահարուստ եւ ծանօթ Կատարինա Սիմոն Թումանեանի հետ: Առաջին զաւակը՝ Յովկի կը ծնի Պաքուի մէջ, 1900 թուականին, երկրորդ զաւակը՝ Գրիգորը՝ Երեւան, 1901-ին, որ իր եկեղեցատէր հօր փափաքով կը մկրտուի էջմիածին, Ջուարթնոց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Ջուարթնոցի վանահայր ու ծանօթ հնախոյզ Խաչիկ Ծ. Վրդ. Դատեանի եւ կնքահայրութեամբ Կոմիտաս Վարդապետի: Կրինֆիլտը ծանօթութիւն ունէր անմահ Կոմիտաս Վարդապետի հետ Պերլինի մէջ, իր ուսանողութեան շրջանին: Երրորդ զաւակը՝ Սահակ կը ծնի Թիֆլիսի մէջ:

Կրինֆիլտ կրկին անգամ Գերմանիա կը վերադառնայ ուսում շարունակելու համար Թիւպինգենի համալսարանի մէջ: 1904 թուականին, ան կը գրէ գիտական աւարտաճառը “Իրանի պետութեան Սահմանադրութիւնը” եւ կը ստանայ քաղաքական գիտութիւններու դոկտորականի տիտղոսը: 1906 թուականին ալ հրատարակած է “Իրանի առեւտրական իրաւունք” գիրքը:

Վերջապէս Կրինֆիլտ, ընտանեօք բնակութիւն կը հաստատէ Պերլինի մէջ եւ կը զբաղուի վաճա-

ռականութեամբ, ուր կը հիմնէ ընկերութիւն մը “Մասիս” անունով:

Պոլսոյ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի որոշումով դոկտ. Ռուբէն Դարբինեանը Պոլսէն Պերլին հասած է 1913 թուականին, նպատակ ունենալով Պերլինի մէջ կազմել Գերման Հայ Կոմիտէ մը, որ կարող էր մեծապէս օգտակար ըլլալ Հայ Դատի հետապնդմանը: Պերլինի Հայերուն մէջ, Ռ. Դարբինեան իր նպատակին համար ամենէն կարելոր ու անհրաժեշտ անձը կը նկատէ անկասկած իրաւաբան ճէյմս Կրինֆիլտը, որովհետեւ դաստիարակութեամբ ու շեշտուած համոզումներով նուիրեալ ազգային եւ ջերմեռանդ լուսաւորչական եւ ամբողջովին լաւ Հայ մըն էր:

Հայկական Կոմիտէի ստեղծումը եղաւ կորիզ մը Պերլինի մէջ, ուր նաեւ կազմուեցաւ Պերլինի հայ համայնքի միութեան վարչութիւն մը, որը առաջին միութիւնն էր կազմուող Գերմանիոյ մէջ, թէեւ այլ քաղաքներու մէջ կային ուսանողական զանազան միութիւններ:

Իսկոյն կը կազմուի ցանկը այն հայերուն եւ գերմանացիներուն, որոնց կարգին դոկտ. Եոհաննէս Լեփսիուս (Փոցտամ, 1858 - 1926), դոկտ. Փաուլ Ռոհրպախ (Պերլին), պատուելի էվալթ Շթիր (Տեսաու), դոկտ. Մարքուարտ (Պերլին), դոկտ. Ռատր (Մարպուրկ): Հայկական Կոմիտէն կը բաղկանար հետեւեալ անձերէ.- Լիպարիտ Նազարեան, բժիշկ Մուրատեան, բժիշկ Վարդապետեան եւ դոկտ. Ռուբէն Դարբինեան՝ Կովկասէն, Վահան Ջաքարեանը՝ Իրանէն, բժիշկ Հայրանեան՝ Պերլինէն:

Բոլորն ալ Հ.Յ.Դաշնակցութեան անդամներ էին, իսկ Կրինֆիլտ՝ Հ.Յ. Դաշնակցութեան համակիր:



Գերման հայ ընկերության կոչեն ետք, Յունիս 18, 1914 թուականին, Պերլինի թագաւորական թանգարանի ազգագրութեան ճոխ սրահին մէջ տեղի ունեցաւ առաջին նիստը: Ժողովը կ'որոշէ հրատարակել “Մետրոպ” անունով պարբերաթերթ մը: Հայերէն խմբագիրը՝ Կրինֆիլտը, իսկ գերմաներէն խմբագիրը՝ պատուելի էվալթ Շփր: Դժբախտաբար “Մետրոպ”-ի միայն առաջին թիւը լոյս տեսաւ Յուլիս-Օգոստոս 1914-ին, երբ երկրորդ թիւը պատրաստուելու վրայ էր, ծայր առաւ Առաջին Համաշխարհային պատերազմը: Երկրորդ թիւը անտիպ կը մնայ Վիեննայի Մխիթարեան-ներուն մօտ:

Պերլինի հայ կոմիտէի հրաւերով ժընեւէն կը ժամանէ բանաստեղծ Աւետիք Իսահակեանը, “Մետրոպ”-ի խմբագրութեան քարտուղարութիւնը ստանձնելու եւ միաժամանակ թերթի հայերէն մասի սրբագրութիւնները կատարելու համար:

Գերման Հայ ընկերութեան նպատակները կ'ամփոփուին հետեւեալ կէտերու մէջ.

Ա. Տարածել հայ ժողովուրդին մասին արդար եւ անաչառ գնահատանք Գերմանիոյ մէջ, եւ գերման ժողովուրդին մասին՝ Հայոց մէջ:

Բ. Միջնորդել, որ հիմնական ծանօթութիւններ փոխանցուին հայ ժողովուրդի ստեղծագործութեանց մասին գերման ժողովուրդին եւ անոր ձգտումներուն մասին՝ հայ մշակոյթին:

Գ. Մշակել անձնական յարաբերութիւններ՝ Գերմաններու եւ Հայերու միջեւ, մանաւանդ անոնց, որոնք Գերմանիոյ մէջ կ'ուսանին:

Դ. Հայաստանի վիճակին մասին ճշգրիտ տեղեկութիւններ տրամադրել գերման մամուլին:

Ե. Թարգմանել արժէքաւոր հայ գրական գործեր գերմաներէնի, եւ գերմաներէն գործեր՝ հայերէնի: Այսպէս, Կրինֆիլտի ջանքերով հիմնուեցաւ Գերման-Հայ ընկերութիւնը եւ մինչեւ Գերմանիայէն հեռանալը 1934 թուականին եղաւ այդ ընկերութեան փոխնախագահը, մօտաւորապէս քսան տարիներ:

Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան կազմի ուժեղացման համար, Հայաստանի կառավարութիւնը յարմար նկատած էր, որ Կոմս Վահան Փափագեանը յատուկ առաքելութիւնով մեկնի Պերլին:

Հ.Հ. դեսպան Ճէյմս Կրինֆիլտի (1918 - 1922),

օգնականներն էին, իբրեւ խորհրդական՝ Լիպարիտ Նազարեանց, քարտուղար՝ Մելքոն Քրիշեան, աշխատակից՝ Երուանդ Աբելեան եւ անպաշտօն աջակից՝ իրանահայ Վահան Զաքարեանց:

Կրինֆիլտի խորհուրդով, Վահան Փափագեանը հանդիպումներ կ'ունենայ Եոհաննէս Լեփսիուսին, Արտաքին Գործոց Արեւելեան ճիւղի վարիչ Պիլիսերին, դոկտ. Եքին, որ Թուրքերման ընկերութեան վարչութեան անդամ էր, սովետական դեսպանատան առեւտրական բաժնի պետ Ալեքսանտր Բեզգադեանին եւ Սիմոն Փիրումեանին հետ:

Երբ Հայաստանի մէջ խորհրդային կարգեր հաստատուեցան, Պերլինի Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը դարձաւ “Հայկական վըստահութեան վայր”:

1923 թուականին Գերմանիոյ պետութիւնը պաշտօնապէս ճանչցաւ Պերլինի հայ գաղութի միութիւնը: Հ.Հ. 5-րդ տարեդարձի առթիւ, Մայիս 28-ին, իրաւաբան դոկտ. Կրինֆիլտի բնակարանին մէջ տեղի ունեցաւ Պերլինի հայ գաղութի անդրանիկ ժողովը: Վարչութեան նախագահ ընտրուեցաւ նոյնինքն Կրինֆիլտ:

Փափկանկատ, պարկեշտ եւ կարգապահ Կրինֆիլտ ապրեցաւ աւելի քան յիսուն տարիներ Գերմանիոյ մէջ, գրեց, գործեց ի շահ Հայաստանին եւ Հայութեան:

Վերջնականապէս 1934 թուականին վերադառնալով Իրան, ան հաստատուեցաւ Թեհրան, ուր նուիրուեցաւ հանրային գործունէութեան, ստանձնելով Թեհրանի Եկեղեցական վարչութեան նախագահի պարտականութիւնը: Անոր գլխաւորութեամբ եւ տքնաջան աշխատանքով էր, որ կազմուեցաւ լուսաւորչական համայնքին պատկանող Իրանահայոց անձնական եւ ժառանգական իրաւունքների կանոնագիրը, որը արժանացաւ երջանկայիշատակ Մելիք Թանգեան Արքայազանի հաւանութեանը եւ 1937 թուականին վաւերացեցաւ երկրի Արդարադատութեան նախարարութեան կողմից:

Կրինֆիլտ իր մահկանացուն կնքեց Հոկտեմբեր 21, 1939-ին:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԿԱԶԴՈՂ ԹՐԶԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ «ՓԱՍՏԱՎԱԽԵՐԱԳՐԱԿԱՆ» ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԾՈՂ ԵՒ ԽԵՂԱԹԻՒՐՈՒԱԾ ԺԱՊԱԽԵՆՆԵՐ

ԱՌՕ ԳԱԹՐՃԵԱՆ


Հալիպ - Սուրիա

Թրքական կառավարութիւնը միշտ ալ խեղաթիւրած է պատմութիւնը, նոյնը ըրած է նաեւ շարժապատկերներու բնագաւառին մէջ: Հետեւաբար, պատմութիւնը խեղաթիւրելու ու մանաւանդ ապատեղեկատուութիւն տարածելու միտումով, թրքական կառավարութեան «ջանքերով» եւս նկարահանուած են 1915-ի դէպքերուն «ամնջուող» շարժապատկերներ, որոնց մէջ, սակայն, ոչ թէ կը պատմուի Հայոց Ցեղասպանութեան, այլ՝ «թուրք ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարին մասին»:

Երբ 1915-ին Թուրքիոյ մէջ կը հիմնուի Թուրքիոյ «Մերքէզ օրտու սինէմա տաիրէսի»ը (MOSD, «Կեդրոն բանակի շարժապատկերի բաժանմունք»), սոյն բաժանմունքի կանոնադրութեան հինգ գլուխներու հիման վրայ կ'որոշուի պատրաստել «թուրք ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարը» ներկայացնող շարժապատկերներ՝ նպատակ ունենալով թուրք ժողովուրդի տրամադրութեան բարձրացումն ու համախընքումը: Այս բոլորին մէջ անկասկած կայ կանխամտածուած ծրագիր՝ նորանկախ Թուրքիոյ հանրապետութեան տարածքին գտնուող քրիստոնէայ փոքրամասնութիւնը՝ յոյները, հայերը եւ ուրիշներ, իբրեւ թշնամի ներկայացնել:

Կառավարութեան ներքեւ գործող շարժապատկերի երկրորդ բաժանմունքը հիմնուած է Թուրքիոյ Խորհրդարանին (TBMM) կողմէ՝ «Օրտու ժապաւէն ալմա տաիրէսի» (OFAD, «Բանակի ժապաւէն ստանալու բաժանմունք»):

Այստեղ անմիջապէս կ'ընդգծենք այն իրողութիւնը, որ թէեւ մէկ կողմէ՝ նկատելի է, որ կարգ մը շարժապատկերներու երաժշտութիւնները ձեւաւորողներուն անունները անգտանելի եղած են, միւս կողմէ, սակայն, հոն տեղ-տեղ օգտագոր-



ծուած են բացայայտ յուզականութեամբ թրքական ողբի երաժշտութիւններ, իսկ նուագարաններու առումով, այդտեղ կշռողը սազը եւ յատկապէս հայկական տուտուկն է: Յաճախ երգուած են նաեւ թրքերէնով ողբի երգեր, ինչպէս նաեւ տեղ-տեղ կը լսուին սիմֆոնիք նուագախումբի այս կամ այն գործիքային ենթախումբերը կամ մենանուագ գործիքները: Թուրքերու կողմէ պատմութիւնը խեղաթիւրելու ճարպիկութիւնը, այստեղ՝ երաժշտութեան բնագաւառին մէջ եւս, ակնյայտ է. անոնք, կ'իւրացնեն հայկական մեր երգերուն երաժշտութիւնները, ինչպէս՝ Կոմիտասի «Սոնա եար»ը, «Տըլէ եաման»ը եւ այլ երաժշտութիւններ, իսկ հայկական ծիրանափողը (տուտուկ) արդէն իրենց կը համարեն:

Մեր պրպտումներուն իբրեւ արդիւնք՝ ստորեւ կը մէկտեղենք մեզ հետաքրքրող Հայոց Ցեղասպանութեան միւրք արծարծող թրքական գեղարուեստական եւ, այսպէս կոչուած, փաստավաւերագրական ընդհանրապէս խեղաթիւրուած շարժապատկերները: Տեսակի ժապաւէններու

Առաջին վաւերագրական շարժապատկերը՝ «Ձաֆէր եօլլարը» («Յաղթանակի ճամբաներով») 1922-ին Ալի Ֆուատ Ուզգընայ նկարահանուած է: Արդարեւ, Ֆուատ Ուզգընայ բնականաբար կը համարուի առաջին թուրք վաւերագրական ժապաւենի բեմադրիչը:

Ուզգընայի յաջորդ վաւերագրապաւենն է «Ձաֆէր եօլլարընտա, Իզմիր զաֆէրի» («Յաղթանակի ճամբաներով, Զմիւռնիոյ յաղթանակը»), ուր կը ներկայացուին հայերու եւ յոյներու ջարդերը՝ իբրեւ «ազատագրական պայքար»ի ուղի: Ժապաւենը սեւ ճերմակ է:

Իրերայաջորդ երկու ժապաւեններն ալ գեղարուեստական են:

Առաջինը, 1923-ին, Մուսիսն Էրթուղրուլի բեմադրութեամբ պատրաստուած «Աթէշթէն կէօնլէր» («Կրակէ շապիկ») ժապաւենն է: Բեմագրութիւնը կը պատկանի նոյնպէս Մուսիսն Էրթուղրուլի, որ Զալիտէ Էտիպի համանուն վէպէն ներշնչուած է: Այս ժապաւենին մեջ առաջին անգամ կը ներկայանան մուսուլման կին դերասաններ՝ Նէյիրէ Նէյիր եւ Պետիյա Մուվահիթ: Ժապաւենը սեւ ճերմակ է:

Երկրորդը՝ 1932-ին, նոյնպէս Էրթուղրուլի բեմադրութեամբ եւ բեմագրութեամբ, «Պիր միլլէթ ույանընթոր» («Ազգ մը կ'արթննայ») ժապաւենը, որ ներշնչուած է Նիզամետտին Նազիֆ Թեփետէլէն-լիօղլուի երկէն: Այս ժապաւենը նոյնպէս սեւ ճերմակ է:

1932-ին Խորհրդային Միութեան կառավարութեան պատուերով խումբ մը ժապաւեն արուեստի գործիչներ գործուղուած են Թուրքիա եւ այդ երկրին նորագոյն պատմութեան փաստերը կեղծելով՝ վաւերական դարձուցած են զանոնք: Բեմադրիչ Սերկէյ Եուքքեվիչի բեմադրութեամբ 1934-ին նկարահանուած է «Անգարա թիւրքիյէնին քալպիտիր» («Անգարան՝ Թուրքիոյ սիրտը») ժապաւենը:

Ժապաւենի տեւողութիւնը 135 վայրկեան է:

1943-ին Շատան Քամիլի բեմադրութեամբ «Օնիւզ գահրաման» («Տասներեք հերոս») ժապաւենը: Բեմագրութիւնը կը պատկանի Ռակըփ Շելքի Եէշիմի, ներշնչուած՝ գերմանացի բեմադրիչ Քըրդ Պերնհարդի 1931-ի «Վերջին միութիւն» ժապաւենէն: Նիւթը կը ներկայացնէ «թուրք ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի» ընթացքին, 13 թուրք զինուորներու «սխրագործութիւնները» ընդդէմ ռուսերու:



1947-ին Թուրկուք Տեմիրաղ, ներշնչուելով Ռեշատ Նուրի Կիւնթեքիւնի վէպէն, կը բեմագրէ ու կը բեմադրէ 89 վայրկեան տեւողութիւն ունեցող «Պիր տաղ մասալի» («Լերան մը հեթաթը») շարժապատկերը: Շարժապատկերին երաժշտութիւնը իրագործած է Մուսիլիս Սապահաթթին Էզկի:

1986-ին թրքական «Թէ.Րէ.Թէ. 1» հեռուստակայանէն սփռուեցաւ «Տուվարտաթի քան» («Արիւն պատի վրայ») գեղարուեստական ժապաւենաշարը (12 մասով):

Ֆիլմաշարին բեմադրիչն է Նաթուք Պայթան (Natuk Baytan), զոր եւրոպացիները կը ճանչնան իբրեւ Natuck Baitan, իսկ բեմագրութիւնը կը պատկանի Սիմ Քեմալ Էօթէի:

«Տուվարտաթի քան» ժապաւենաշարը կը պատմէ Թալէաթ փաշայի սպանութիւնը Սողոմոն Թէլիրեանի կողմէ, ինչպէս նաեւ վերջինիս դատավարութիւնը: Նշենք, որ Թալէաթ փաշայի գնդակահարումը կը ներկայացուի ետեւէն եւ ոչ թէ դիմացէն, իսկ նկարագրութիւնը բոլորովին խեղաթիւրուած: Վերը յիշեցինք շատ մը ժապաւեններէն, քանի մը հատը միայն. ներկայացնենք նաեւ թրքական պատկերասփիւռի կառավարական կամ անձնական կայաններէն սփռուած յատուկ վաւերագրական ժապաւենաշարերն ու ժապաւենները Զայոց Տեղասպանութեան վերաբերեալ:

Իրերայաջորդ երեք ժապաւենները կը պատկանին բեմադրիչ Զիւսէյին Քանըրլմազի:

Առաջինը՝ 1993-ին նկարահանուած, 10 արարով վաւերագրական ժապաւենաշար մըն է, որ կը կրէ

«Եաշաեան թարի» («Ապրող պատմութիւնը») խորագիրը:

Ժապաւենաշարը, ըստ թուրքերու, կը նկարագրէ Անատոլիոյ վիճակը «հայերու յայտնութենէն ետք»: Իբրեւ թէ Օսմանեան կայսրութեան ընթացքին յատուկ տեղ ունէին հայերը, սակայն 1878-ին (Պերլինի վեհաժողով) հզօր պետութիւններու «գրգռութեամբ», հայերը ահաբեկչական գործողութիւններ կը կատարեն:

Ֆիլմաշարին մէջ այս մասին կը պատմեն վերապրողներ:

Բնականաբար ժապաւենաշարի ամէն մէկ արար, առանձին-առանձին կը նկարագրէ ժամանակաշրջան մը եւ հայերուն վիճակը յարափոփոխ ժամանակահատուածներու մէջ:

Քաներլմագի երկրորդ ժապաւենը 28 վայրկեան տեւողութիւն ունեցող «Սոյքըրըմ եօլլարը» («Ցեղասպանութեան ճամբաները») վաւերագրական ժապաւենն է, որ նկարահանուած է 2000 թուականին:

Հոն կը խօսուի հայերու մասին, որոնք Ռուսիոյ յեղափոխութենէն փախչելով՝ կ'ուղեւորուին դէպի հարաւ-արեւմուտք եւ իրենց ճանապարհին վրայ իբր թէ ջարդեր կը կատարեն այն բոլոր գիւղերուն մէջ, որոնց կը հանդիպին:

Քենադրիչ Հիւսէյն Քաներլմագի երրորդ ժապաւենն է «Արարատիզմ վէ 24 Նիսան» («Արարատիզմը եւ 24 Ապրիլը»):

2000 թուականին նկարահանուած այս վաւերագրական ժապաւենին տեւողութիւնը 82 վայրկեան է: Ըստ ժապաւենին՝ «Հայերու մեծ գաղափարախօսութիւնը եղած Արարատիզմի ծանուցումը ներկայացնող վաւերագրականը, ինչպէս նաեւ ամէն տարի Ցեղասպանութեան օր յիշատակուող Ապրիլ 24-ի ճշմարտութեան պատումը»:

Այս ժապաւենը կը նկարգրէ 24 Ապրիլ, 1915-ին Օսմանեան կայսրութեան մէջ հայերու նկատմամբ որդեգրուած որոշ դիրքորոշումները:

1977-ին Նիհան Կիտեր եւ Աֆէտ Էրթօփճու կը նկարահանեն «Քալապալըքքէն» («Քանի բազմութիւն է») վաւերագրական խտասալիկը: Ժապաւենը պատումն է վերջին ամասիացի հայուն, որ կը բնակէր Ամասիա եւ գաղթած է Պոլիս: Հոն կը պատմուի Թրքական Հանրապետութեան առաջին օրերուն Ամասիոյ ժողովուրդին մասին, հայ եւ թուրք դրացնութիւնը եւ այլ հետաքրքրական նիւթեր:

1999-ին նկարահանուած է վաւերագրական «Հաֆըզասընը եփթրմէյէն հալք. Էրմէնիլէր» («Յիշողութիւնը չկորսնցնող ժողովուրդ՝ Հայերը») ժա-

պաւենը քենադրիչ Քենալ Ուզունի կողմէ:

Ըստ ժապաւենի պատումին՝ 1894 թուականին նահատակուած են 1000 հայեր Սասունի կոտորածներուն ընթացքին, ապա թրքական բարենորոգումներէ ետք՝ 1895-1896 կոտորածներուն՝ 100.000, 1913-ին կրկին բարենորոգումներէ ետք եւ 1915-1918 կոտորածներէ ետք 1.000.000 հայեր եւս նահատակուած են:

«1894-1895-1915 թուականներուն զուգահիստող 1000 / 100.000 / 1.000.000 պատկերը աշխարհի կոտորածներու պատմութեան մէջ մնանը չեղած կոռ կրակ մըն է», ըստ թուրքերու, այսինքն՝ «ստախօսութիւն»: Այս պատկերին կ'աւելնայ նաեւ 1909-ի Ատանայի կոտորածը, որուն զոհ գացին 25 հազար հայեր (վերջին տուեալներով՝ 40 հազար):

2000 թուականին թրքական «Թի.Վի.8» պատկերասփիւռի կայանին պատրաստութեամբ սփռուեցաւ «Էմփէրեալիզմին Էրմէնի օյունու» («Կայսերապաշտութեան հայկական խաղը») վաւերագրական ժապաւենաշարը, որ կը բաղկանայ երեք արարէ: Նիւթը պատումն է 1915-ի Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին Անատոլիոյ մէջ մղուած պատերազմին, մասնաւորապէս հոն լուսարձակի տակ կ'առնուին Հայոց Ցեղասպանութիւնը, մանաւանդ Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցած Հայ Դատի յանձնախումբի տարած աշխատանքները:

Ըստ ժապաւենաշարի քենագրութեան՝ «Ցեղասպանութեամբ զրպարտուած թուրքերը, օրին շատ աւելի զոհեր տուած էին, քան հայերը»:

Հետեւաբար, հոն կը պատմուի, որ 19-րդ դարուն արեւմուտքի ախորժակը բացուած էր Կասպիցի նաւթի վրայ, եւ այդ պատճառով տեղի ունեցան ռուս-թրքական պատերազմն ու հայերու այսպէս կոչուած ըմբոստութեամբ որոշ ապստամբութիւններ:

Ժապաւենաշարի քենադրիչն է ճիհան Աքերսոնը:

Մուրատ Էրտիւնի քենադրութեամբ 2001-ին նկարահանուած է «Էրմէնի սորունու» («Հայկական հարցը») վաւերագրական ժապաւենը:

2002-ին Պանու Աւարի քենադրութեամբ եւ ներկայացումով լոյս տեսաւ «Ունութիւն երլլար. Պաթը Սելը» («Մոռցուած տարիներ, Արեւմուտքի Սելը») երկու արարով վաւերագրական ժապաւենը:

Վերոյիշեալ վաւերագրականը հարցին կը մօտենայ այն դիտանկիւնէն, որ 1920 թուականին Սելրի